



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16359

16359?



1865

9 110

ՏԵՂԵԿՈԳԻՐ

ՔՈՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ.08

ԿԵՐՊՈՒԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ա.Ա.

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

1865

7016

422

361

Կ - 23

10

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԸՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Printed in Turkey

Ա. Ա.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԷՆԴՀԱՆՈՒԹ ԺՈՂՈՎ.



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. Յ. ՖԻԼԻՔՃԵԱՆ
Կ. ՊՈՂԻՍ ՖԻՆՃԱՆՃՂԱՐ

- 1865 -

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄԻ

ԱԼԵՔՍԱՆ ԷՖԻՆՏԻ ՍԱՔՍԱՅԵԱՆ
ԱՆԴԻՐԱԿԱԿ Պէջ ԿՈՋԻԿԵՍԱՆ
ԲԱՐՈՒՆԱԿ Պէջ ԹԵՐՈՒՀ ԱՄԵՆԱՊԼԿԱ
ԳէՈՐԳ Պէջ ԵՐԱՄԵԱՆ
ԳէՈՐԳ ԷՖԻՆՏԻ ԽՍԹԻՄԱՐՍՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԷՖԻՆՏԻ ԱՂԱԹՕՆԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԷՖԻՆՏԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ ԱՄԵՆԱՊԼՐ
ԵԱՂՈՒՊ ԷՖԻՆՏԻ ԵԱՂՈՒՊԵԱՆ
ԽԱԶԻԿ ԷՖԻՆՏԻ ԱԼԵՍԱՍՔԵԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍ ԷՖԻՆՏԻ ՄԻԻՃԻՆՏԻՍԵԱՆ
ՄԻՆԱՍ ԷՖԻՆՏԻ ՄԻՆԱՍԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ԷՖԻՆՏԻ ԱՂԱԹՕՆԵԱՆ ՎԻՇ-ԱՄԵՆԱՊԼԿԱ
ՅԱԿՈԲ ԷՖԻՆՏԻ ՄԻԻՊԱՃԵԱՃԵԱՆ
ՅԱԿՈԲ ԷՖԻՆՏԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՅԱԿՈԲ ԷՖԻՆՏԻ ՖՐԻՆԿԵԱՆ
ՅԱԿՈԲ ԷՖԻՆՏԻ ՊՈՒՐՈՒՆՍՈՒԶԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖԻՆՏԻ ՍԱՐՈՒԻԱՆԵԱՆ
ՈՒՄԻՏ ԷՖԻՆՏԻ ՊէջօՏԱՏ
ՍՏԵՓԱՆ ԷՖԻՆՏԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ
ՎԱՐԴԻԵՐԵՔ ԷՖԻՆՏԻ ՄԻՍԱՔԵԱՆ

ԾԱՀՅՈՒՆԵԼԵՆ . ՄԿՃԱՇՊՔ Աղաթօնեան Գրիգոր Էֆինտին , որ
Ամենապլետ ընտրուած էր՝ Գ. նիստին Ամենապլետովինէ հրաժա-
րելով՝ վիճակի մասին Մեծ . Բարունակ Պէջը անոր տեղ ընտ-
րուեցաւ . և Մեծ . Խոթիմարաճեան Գէորգ Էֆինտին՝ որ վիճա-
կի մասին էր , Բարունակ Պէջին տեղը : Սակայն այս վերջինն ալ-
դուրս գնալով ԺԹ . նիստին Մեծ . Աղաթօնեան Մկրտիչ Էֆինտին
անոր յաջորդեց :

2002

6409

39

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՑ

Ա.Բ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ



Եթի 1863 Մարտի 17 ին Օսմանեան Պետութենէն Աղջային Սահմանադրութեանը վաւերացեալ յանձնուեցաւ Աղջին գործադրութեան Բարձրադպոյն Հրամանաւ, նոյն տարւոյն Սեպտեմբեր 29 ին նորընտիր բնդհանուր ժողովը կեղծոնական վարչութեան կրօնական եւ Քաղաքական ժողովները ընտրեց :

Այս Քաղաքական ժողովը իր պաշտօնը սկսաւ 1863 Հոկտեմբեր 7 ին եւ շարունակեց մինչեւ 1864 Յունիսի վերջերը, դրեմէ ինն ամսոյ չափ : Նոյն միջոցին Քաղաքական ժողով՝ որոյ անդամոյ մէջ ծագած անհամաձայնութեան եւ հրաժարման պատճառները յայտնի են, իր պայմանաժամէն առաջ լուծուելով՝ բնդհանուր ժողովը Յուլիսի 17 ին նոր Քաղաքական ժողով մը վերակազմեց եւ անոր յանձնեց նախորդին պաշտօնը շարունակել, զոր հետեւապէս շարունակեց՝ առանց հաստատութեան նոր արքունի Հրովարտակ խնդրելու, մինչեւ որ Սահմանադրութեան պահանջած երկուամս Մըլանը պահանջայ :

* Հարկ է գիտնալ որ Սահմանադրութեան այս առաջին երկուամս Մըլանը մինակ 48 ամիս կը պարունակէ . ըստ որում նախկին Քաղաքական ժողովը իր պաշտօնը 4865 Սեպտեմբեր ամսէն սկսած ըլլալով յաջորդող Քաղաքական ժողովը երկու տարիէն աւելի պաշտօն վարած կըլլար, Սահմանադրութեան հակառակ զայն մինչեւ 1866 Ապրիլի վերջը շարունակելով :

Ալոր՝ թէեւ Սահմանադրութեան 61^ր յօդուածին համաշայն՝ Քաղաքական ժողովը պարտաւոր է սոյն երկամեայ շրջանին համարատութիւնը ընել ընդհանուր ժողովցու, բայց ըստ որում արդի Քաղաքական ժողովը նախորդ ժողովի մը շարունակութիւնն է եւ այսպիսի պարտաւորութիւն մը չի կրնար ինքնին իր վրայ առնուլ առանց ապօրինաւորութեան մէջ կինալու, կը փութայ՝ այս բացառիկ պարագան նշանակերպ՝ զոր Սահմանադրութիւնը նախատեսած չէ, իր պաշտօնատարութեան միջոցին մէջ՝ որ նոյնպէս ինն ամիս կը տեւէ, ըստ գործողութեանց համառօտ նկարագիրը ներկայացունել:

Քաղաքական ժողովը ձանձրութիւն չպատճառելու համար՝ չ'ուզեր մի առ մի նշանակել իր 19. նիստերուն մէջ ըրած բոլոր որոշումները եւ տեօրէնութիւնները, որոց արձանագրութեանց տումարները ազգային Դիւանատան մէջ ըստ են հետաքրքիր երեսվուսանաց առջեւ, և ոչ զատ զատ պատմել պաշտօնական թղթակցութեանց նիւթերը*, այլ միայն

* Թէ նախորդ եւ թէ յաջորդ Քաղաքական ժողովներուն որոշմամբը ազգային Դիւանատան կողմէն գրուած պաշտօնական գրութեանց անսական ցուցակը ահաւասիկ կը նշանակուի այս տեղ ՚ի ծանօթութիւն։

ՀԱՅԵՐԵՆ

Տեսակ	Վարչական	Գաւառական	Թաղական	Մանաւոր	Գումար
Թիւ	278	440	242	284	1244

ՏԱՅԿԵՐԵՆ

Տեսակ	Ցայտագիր	Ծանուցագիր	Կամաց	Աճաւագիր	Գումար
Թիւ	290	482	93	46	581

Հայերէն թղթակցութեանց տեսակէն ընդհանրապէս յայտնի ըլլալով անոնց պարունակութեանց իմաստը, արժան կը դատուի միայն տաձկերէն գրութեանց իմաստին վրայ ընդհանուր տեղեկութիւն տալ: Յայտագիրներէն 45 հատը գաւառներու մէջ եկեղեցեաց, զրպաւատանց եւայլն շինութեան եւ նորոգութեան կը վերաբերին, որոց

պարտ կը համարի ընդհանութ տեսութեամբ յիշատակել այն
խնդիրները որ ընդհանութ կարեւորութիւն ունին եւ ասպա-
դային մէջ կընան հետեւութիւն կամ նշանակութիւն մ'ունե-
նալ . Ուստի առանց ժամանակագրական եւ առաջնութեան
կարգ պահելու բաղաքական ժողովը չըրա գլխաւոր մասի
կը բաժնէ խնդիրները . այսինքն ,

Վարչական .

Հսմնրական .

Գաւառական .

Թաղական .



ՎԱՐՉԱԿԱՆ

Քաղաքական ժողովը իր դիւանը կազմելէն ետքը՝ իր Յարարերութիւնը՝ նախարդին տնօրէնութիւնները ընդհանրապէս յարգելու տրա-

հրովարտակները առնուած եւ զրկուած են . 20 հատ մը թէ կրօնա-
կան եւ թէ աշխարհական ազգային պաշտօնէից համար Տէրութիւ-
նէն աստիճան եւ պատուանչան խնդրելու մոօք զրուած եւ ցարդ
մինակ կրօնականաց չնորհուած են . 20 հատ մը Առաջնորդաց եւ
Պատրիարքական փոխանորդաց հաստատութեան համար զրուած
եւ հրովարտակները առնուած են : Խակ մնացորդ յայտադրոց մնէ
մասր գաւառաբնակ պազմոց զանազան առթիւ կրած նեղու-
թիւնները բառնալու մոօք ուղղուած են առ Բ. Դուռն , ինչպէս ար-
քունի տարեկան արոց եւ հին գլխահարիկ մնացորդ պահանջում-
ները ներել աւալու , թէ զինուորական եւ թէ ուրիշ արքունի արոց
թիւնուութեան , գաղթական վրացոց երեսէն պատահած տառա-
պանաց բարձման եւ ուր ուրեք եղած վեասոց հաստույման , նոյն-
պէս քրթաց եւ տէրէպէկիններու գործած հարսաահարութեանց եւ
չարեւաց ջնջման համար : Եւ մէկ փոքր մասը զրուած են Տէրու-
թեան գաւառական եւ այլ պաշտօնաստարներու նկատմամբ ժողո-
վրդեան եւ Առաջնորդաց կողմէն եկած չնորհակալութիւնները եւ
գանգաւանները Բ. Դրան հաղորդելու համար : Խակ միւս տաճկերէն
գլիրերը՝ թէ ի մասնաւորի զանազան գործոց համար Տէրութեան
պաշտօնէից զրուած են , թէ Տէրութեան Ատեաններու մէջ բաց-
ուած տեսչական , առեւտրական , դաստաստանական , կալուածա-
կան եւային խնդիրներու համար ուղղուած են՝ իրը յայտարարու-
թիւն , յանձնարարութիւն , պատասխան եւ վճռապիր :

մաղթութեամբ՝ արդէն դտնուած ցեսուչ խորհուրդները եւ Հոգաբարձութիւնները վերահաստատեց եւ գլխաւորապէս թէ Բ. Դրան եւ Տէրութեան ատեաններու, թէ աղդային ժողովոց, թէ Առաջնորդաց եւ թէ Խորհրդոց հետ ունեցած այլ եւ այլ յարաբերութիւնները սկսաւ.

Քաղաքական ժողովը Բ. Դրան հետ ունեցած յարաբերութեանց մէջ միշտ Աղդին իրաւոնքը եւ շահերը մեր եւ Տէրութեան օրինաց համաձայն ապահովելու մտադիր՝ իրեն կարեւոր հոգերէն մէկը ըրած էր տաճկարնակ աղդայնոց այլ եւ այլ արդարացի դանդատները եւ խնդիրները Բ. Դրան ներկայացունել. իր յայտագիրներէն մէկ մասը, որ էապէս դաւառաբնակ աղդայնոց կրած այլ եւ այլ նեղութեանց կը պատկանին, նոյնպէս աղդային հաստատութեանց շինութեան եւ նորոգութեան եւայլն, գործադրութիւն դտած են, իսկ այն խնդիրները մանաւանդ՝ որ արքունի որոց կը վերաբերին՝ եւ անգործադրելի կը մնային, Քաղաքական ժողովը ստիպուած էր իր յայտագիրներով առ Բ. Դուռն երկրորդել եւ երրորդել եւ առէզ Ա. Նախագահին միջոցաւ բանակցելու միայն ձեռնհաս եղած է:

Յանձնուառապահեր Քաղաքական ժողովը Սահմանադրութիւնը իրեն ուզեցցց՝ արդարութիւնը եւ Աղդին իրաւոնքը սկզբունք բռնելով՝ իր իշխանութեան տակ դտնուած գործիքները կատարելու գործելու եւ գործոց գիւրութիւն եւ յառաջադիմութիւն տարու համար այլ եւ այլ յանձնաժողովներ եւ մասնաժողովներ կազմեց, որոց միջոցաւ Պատորիարքարանի բարեկարգութեան, կանոնադրութեանց խմբագրութեան եւ ուրիշ ընդհանուր կարեւորութիւն ունեցող խնդիրներու մնօրէնութեան փոյթ տարաւ:

Դիւան Քաղաքական ժողովին դիւանը եւ մանաւանդ. Ասենացելու պէտք՝ որոշեալ նիստի օրերէն զատ՝ երեն պարտք ըրած էր ամեն չորսքշարթի օրեր՝ 'իներկայութեան Ա. Պատրիարքի եւ աշակեցութեամբ Դիւանատան գլխաւոր պաշտօնէից, Պատրիարքարան հասած բոլոր դրութիւնները աչքէ անցունել, Սահմանադրութեան Տ. յօդուածին համեմատ. անտնյ բաժանման դրապիլ, ժողովին որոշումները դիւրացունելու

մոտք անոր առջեւը գալիք խնդիրներուն ներկայացման կերպարաննք մը տալ, առօրեայ ընթացիկ դործերը տնօրինել եւ խիստ ստիպողուկան խնդիրներուն լուծումը Ա. Պատրիարքին պատասխանառութեան թողուշ յաջորդ նիստին ժողովին իմաց տալու պայմանաւ :

Քաղաքական ժողովը ներքին կանոնադրութեան մը պէտք քը զգալով՝ որպէս զի իր ատենական եւ դիւանական ընթացքը ըստ օրինի վարէ, իր մէջէն Մասնաժողով մը կազմեց անոր խմբագրութեան դրազելու : Սակայն Մասնաժողովը պյլ եւ այլ սրագառութեան իր ծրագրութեան չի կրցաւ ներկայացնել :

Քաղաքական ժողովը յատուկ Մասնաժողովի մը միջոցաւ թէ դիւանական եւ թէ Պատրիարքարանի պաշտօնէից կարգադրութիւնը տնօրինեց՝ նախորդ ժողովին ըրած կարգադրութեան ծավառց վրայ լոկ 1300 դուրուշի տարբերութիւն մը ընդունելով . իսկ Դիւանատան համար պատրաստուած ներքին կանոնագիրը քանի մը փոփոխութեամբ հաստատեց եւ անոր դործադրութիւնը դիւանապետին յանձնեց :

Քաղաքական ժողովը իր Ատենադրութեանց առումարները ազգային լրագիրներու առջեւ բաց թողելէն յատաշ եկած անպատճենութիւնները նկատելով՝ իր նախորդին որոշման համեմատ՝ արժան համարեց մինակ դիւանին կողմէն յարմար դաստած խնդիրները ազգային թերթերուն հաղորդել՝ ի հրատարակութիւն . Եւ ըստ որում պաշտօնական լրագրի մը հաստատութեան միջոցներուն վրայ խորհելու համար արդէն սահմանուած Մասնաժողովը լուծուած էր կամովին, Քաղաքական ժողովը այնպիսի լրագրի մը կարեւորութիւնը զգաց եւ դիւանապետին մատուցած ծրագրին նկատմամբ՝ Ծնդհանուր ժողովոյդ Դիւանին կարծիքն ալ առնելով՝ որոշեց առանց պաշտօնական դոյն տալու՝ Դիւանապետին միջոցաւ ուրիշ ազգային լրագրի մը ձեռնարկութեան ՚ի հարկին ձեռն առու գտնուիլ :

Մինչդեռ Քաղաքական ժողովը մէկ կողմէն հանրական, գաւառուական, թաղական եւ մասնաւոր բազմաթիւ դործեր ըստ Սահմանագրութեան տնօրինելու կ'աշխատէր, միւս կողմէն ցաւօք սրտի կը նկատէր որ իրեն թեւակից ճիւղերէն

Քաղաքական
ժողովի ներքին
կանոնագիր:

Գիւանագրութիւն
դարձարագութիւն:

Պատասխան
լրագրի:

Հարցութեան
ժիւղերը:

մեծ մասը ըստ օրինի չէին գործեր եւ անոնց այս անդորժունեաց վիճակը վարչական մեքենային խանդարման երբեմն տեղի կու տար :

Դաստիարական
խորհութեան իրաւ է որ դատաստանական խորհուրդը շարունակ ամեն չըրեցարթի օր իր առեանը կը բանար , եւ ամուսնական , դրամական , առանին ու այլ եւ այլ կնճռալից դատեր տեսնելով՝ իր տեղեկադիրները Քաղաքական ժողովցն կը մատուցանէր , ինչպէս որ անոր ներկայացուցած համարատուութեան ընդհանուր Յայտագիրը կը ցուցնէ :

Ուստի մասնական
խորհութեան իրաւ է որ Ուստիմնական խորհուրդը՝ որուն Յայտագիրը զգալի ապացոյց մ'է իր բաղմաջան երկասիրութեան , կը չանար գէթ Մայրաքաղաքիս ազգային վարժարաններուն բարեկարգութեան հօգել եւ այս նպատակաւ կանոնագրութիւն մը յօրիներ էր , որ Ընդհանուր ժողովց վաւերացման ներկայացունելու համար խնդրոց կարգը ՚ի վաղուց անցած է , եւ սոյն կանոնագրութեան ընդունելութենէն կախումն ունէր Ուստիմնական խորհրդոյն առ Քաղաքական ժողովն ըրած քանի մը առաջարկութեանց գործադրութիւնը .

Առարկ Գրիգոր
Հաղարքան թիւն իրաւ է որ ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը որ գրեթէ կիսով չափ նարոգուեցաւ , ազգային տառապելըց վիճակը բարելաւելու համար հոգւով չափ այս բարեպաշտական հաստատութեան մատակարարութեան հոգ կը տանէր դրամական մեծամեծ դժուարութեանց յաղթելով՝ եւ Մեծապատիւ Նորիկեան նշան Էֆէնտիին առաջնորդութեամբ՝ կերպունական Մնտուկին վրայ չծանրանալու դաշտի՝ Հիւանդանոցի անձեւ շէնքին նորոգութեան գործը կը շարունակուեր :

Վակայն Վանօրէից
խորհութեան Սակայն վանօրէից խորհուրդը , ուր ուրեմն իր մեծ մասը դատնելով՝ վանական գործերու վրայ խորհուրդ մը կամ կարծիք մը կը յայտնէր եւ այս ապարդիւն վիճակին պատճառ կը ցուցնէր իր պաշտօնին վերաբերեալ տեղեկութեանց պակասութիւնը եւ վանօրէից կանոնագրութեանց չգոյութիւնը , որոնք Խառն ժողովին գործն էին պատրաստել եւ խմբագրել եւ այս նպատակաւ թէեւ խառն Յանձնաժողով մը կազմուած էր վանօրէից ծրագիրները յօրինելու եւ անոր առաջարկու-

թեան համաձայն բոլոր Առաջնորդաց շրջաբերականներ ուղղուած էին վանօրէից վրայ վիճակսպական ծանօթութիւններ խնդրելու, բայց ատոնք ու չանալուն՝ Ասհմանադրութեան 68^ր յօդուածին տրամադրութեանց գործադրութիւնը կախմաց եւ մինակ Մշոյ Գլակայ վանուց կանոնագիրը Գերապատիւթիւն ափու Խրիմեան Մկրտիչ վարդապետին խորհրդակցութեամբը շինուեցաւ, որ տակաւին խնդհանուր ժողովոյդ վաւերացման դրոշը չի կրեր, նոյնպէս Մշոյ առաջնորդական եւ վանական իրաւասութեանց սահմանին բաժանմանէն, (զոր նախորդ Քաղաքական ժողովը անօրիններ էր իրաւամբ) ծագած նոր յարաբերութիւնները կանոնի տակ մնան. Եւ նոյն միջոցին Քաղաքական ժողովը իր վրայ առաւ նաեւ Ա. Երուսաղիմայ վանուց կանոնագիրը պատրաստել խառն ժողովավ եւ զայն լինդհանուր ժողովոյդ քննութեան եւ վաւերացման մատոյց, ինչպէս որ գիտէ.

Սակայն կտակաց հոգաբարձութիւնը՝ որ նոյնպէս մաւ հագաբարձութիւն: սամբռ նորոգուեցաւ, եւ անփոյթ չէր գործելու ու խընդըուած ժամանակը հրիտավիկ խնդիրներու վրայ կարծիք յայտնելու, իր պաշտօնին էական մասերը անձեռնհաս կը դատնուէր կտակարել, քանի որ ազգային կտակաց վրայ, իր առաջնորդութեան համեմատ՝ թէ թաղական խորհուրդներէն եւ թէ գաւառներէն խնդրուած տեղեկութիւնները չէին հասներ եւ քանի որ Ասհմանադրութեան Յությօդուածին համաձայն շինուելիք կտակաց մասնաւոր կանոնագրին ծրագիրը այս նպատակաւ կազմուած յատուկ Մասնաժողովի մը կողմէն խառն ժողովին ներկայանալու կրյապարէր, որով աղդային կտակաց արձանագրութիւնը եւ անոնց անօրինութեան ամենակարեւոր գործը վարչութեան հսկողութենէն տակաւին դուրս կը մնան:

Սակայն ցնտեսական խորհուրդը Ելեւմոից հոգաբարձութեան հետ՝ որ վարչութեան ամենակարեւոր ճիւղերն են Ազգին նիւթական շահերուն նկատմամբ՝ ցաւալի անհամաձայնութեան ասպարէզ մը բայցած էին երբ Քաղաքական ժողովը գործոց գլուխը անցաւ: Այս անհամաձայնութեան պատճառը մասսամբ իւիք անոնց մէջ ծագած իրաւասութիւնը

Մշոյ Գլակայ վանուց կանոնագիրը

Առաջնորդ երուսաղիմայ վանուց կանոնագիրը

Տասեական խորհուրդ
և Ելեւմոից
հոգաբարձութիւն:

թեան խնդիրներ՝ եւ մասամբ իւիք կեդրոնական գանձապահ Մոմենեանի դասն էին, որք ութն ամս տեւեցին:

Երկու կողմէն իրարու գէմբողոքներ կը լսուէին: Տնտեսական խորհուրդը կ'ամբասասանէր Ելեւմոից հոգաբարձութիւնը՝ որպէս թէ իր սահմանէն դուրս գործոց կը խառնուի եւ անոր որոշմանց հակառակ կը շարժի եւ կը պնդէր թէ նա պաշտօն ունի միայն Մնտուկին մնտեսութեան եւ սումարակալութեան՝ գանձապետի պէս մինակ ստակ առնուլ ու տալ է գործը միշտ Տնտեսական խորհրդոյ դիտութեամբը եւ Քաղաքական ժողովոյ հաւանութեամբը:

Ելեւմոից հոգաբարձութիւնը կը բողոքէր թէ Տնտեսական խորհուրդը Մնտուկը չի մոտած հասոյթ մը ինքնովին ազգային պարտուց կը յատկացունէ առանց օրինաւոր ատեան բանալու եւ Մնտուկին վիճակին վրայ տեղեկութիւն խնդրելու, եւ կը պահանջէր որ ուղղակի յարաբերութիւն ունենայ Քաղաքական ժողովին հետ, փոխանակ ամեն առթիւ Տնտեսական խորհուրդին դիմելու:

Քաղաքական ժողովը Սահմանադրութեան 46ր եւ 49ր յօդուածոց տրամադրութեանց համեմատ իւրաքանչիւրին իրաւասութեան սահմանը բացատրեց եւ հարահանդներ ուղղեց: Նոյնպէս յատուկ Մասնաժողովի մը միջոցաւ գժտութեան շարժառիթը քննելէն ետեւ՝ յորդորեց որ անտես առնելով երկուստէք եղած քանի մը ապօրինաւոր գործողութիւնները, իրենց յատուկ յատուկ պաշտօնը համաձայնութեամբ շարունակեն, պատուիրելով միանդամայն որ իրենց վերաբերեալ կանոնները շինեն ու ներկայացունեն:

Քաղաքական ժողովը պարտի խաստովանիլ որ իր յորդորները յարատեւ արդիւնք մը չունեցան: Ըստ որում Մոմենեանի խնդրոյն առթիւն նոյն իսկ Տնտեսական խորհուրդին մէջ երկապառակութիւնը ծագեցաւ եւ անոր անդամները գրեթէ ամբողջապէս հրաժարելով ցիր ու ցան եղան եւ նոյն միջոցին Ելեւմոից հոգաբարձութիւնն ալ այս եւ այլ պատճառաւ հազիւ թէ կենդանութեան նշոյլ մը՝ եւ մանաւանդ վերջին օրերը ցաւալի շիրթութեան տեսարան մը կ'ընծայէր:

Քաղաքական ժողովը՝ թէ եւ տրամադրիր Տնտեսական

խորհրդոյ հրաժարականը ընդունիլ եւ Ելեւմոից հոգարար ձաւթիւնը վերակազմելը բայց օրովհետեւ իր պաշտօնին պայմանաժամը լրանալու մօտ էր եւ նորոգ ընսրութեանց զրավելու, որոնք միշտ մեծ դժուարութեամբ կ'ընդունուին, ժամանակ չունէր, արժան դատեց ջնտեսական խորհրդոյ հրաժարաման պատճառը բառնալով նոյնպէս Ելեւմոից հոգարածութեան անկարգութեան հեղինակը քննութեան կոչելով՝ կրկին յորդորել զանոնք իրենց պաշտօնին՝ եւ յաջողեցաւ։

Խակ գանձապահ Մոմեանի խնդիրը, որուն հետզետէ ստացած այլ եւ այլ կերպարանքը տաղուկալի կ'ըլլայ նկարագրել, 'ի վերջէ Քաղաքական ժողովց եւ Ելեւմոից հոգարածութեան անդամոց ոմանց առջեւ՝ ջնտեսական խորհուրդը քննելով՝ իր տեղեկադրովը հերքեց տնտեսական անդամի մը կողմէն անոր գէմ եղած ամբաստանութիւնները, եւ հաստատեց յիշեալ ամբաստանեցին հաւատարմութիւնը, անսպարտութիւնը՝ եւ կեդրոնական Մնտուկին օրական տումարներուն՝ թէեւ անկանոն ըստ վաղեմի սովորութեան, անխարդախութիւնը։

Ջնտեսական խորհուրդը՝ այս ներքին շփոթութեանց զայտուկը պատճառաւ՝ չի կրյաւ ոչ իր գործողութեանց յայտագիրը եւ ոչ Ելեւմոից եւ Հիւանդանոյի հոգարարձութեանց հաշիւը քննելով՝ Քաղաքական ժողովին օրինաւոր Ելեւմոից ցուցակ եւ յաջորդ ասարուան հաշուեկիւը ներկայացնել, որ կարող ըլլար իր կողմէն վարչութեան տնտեսական ու երմտական վիճակին մանրամասն պարագաները հաղորդել պատկառելի ժողովցդ։

Բայց դարձեալ կեդրոնական Մնտուկին տումարները թէ Մնտուկին պահանձական եւ անխօս՝ թարգմանի կարօտ չէին իրենց բացը ցուցնելու, մանաւանդ՝ Քաղաքական ժողովին որ ստէոլ իր շարժմանց մէջ անոր դիմելու պէտքը կ'զգար եւ շատ անդամ ունացնածեռն կը դառնար։ Ուստի Քաղաքական ժողովը գիտակցութեամբ կը նիսիլ իսկայ խօսիլ՝ եւ պատկառելի ժողովցդ ու շադրութիւնը այս նիւթիս վրայ մասնաւորապէս հրաւիրել։

Արդէն կեդրոնական Մնտուկին ելից ու մտից մէջ հաւասար ընդհանուր տուրք բակշութիւն պահել անհնար՝ եւ մանաւանդ՝ Ազգային Պատ-

ըիսարքարանի սովորական հասոյթները պակսած՝ եւ պահանջմար անվճար մնացած ըլլալով՝ Քաղաքական ժողովը ծախուց ստիպողական եւ անհրաժեշտ առաւելութեան դէմք առնելու յուսով՝ իր առաջին նիստէն սկսած էր՝ 1864 Յունիս 24ին ինդհանուր ժողովոյդ կազմէն որոշուած ազգային տրոց բաշխման եւ հաւաքման դործադրութեան զրադիլ։ Բայց դժբաղդաբար այս տուրքէն, որ 400,000 զուրուշի պիտի հասնէր, չի կրցաւ մեծ բան ձեռք բերել, եւ թաղական խորհուրդներէն փոխառութիւն ընելու պարագ տեղը աշխատել ետեւէն։ Ս. Փրկչի Հիւանդանոցի պիտոյից համար արտաքոյ կարգի միջոցի մը դիմեց՝ Դիւանիդ եւ վարչութեան ճիւղերուն հետ համախորհուրդ ժողով կազմելով։ Խոկ ազգային տրոց անյաջողութեան պատճառները՝ Քաղաքական ժողովը՝ Մարտի 19ին ատենի աստ կարդացուած Յայտագով բազուագով՝ բացատրած ըլլալով՝ աւելորդ կը համարի զանոնք երկրորդել եւ մինակ կեղծոնական Մնատուիին Հաշուետու մարներէն քաղուած հետեւեալ հաշուեկշուը կը ներկայացնէ։

Հաշուեկշու։

ԱՐԴԻ ՎԻՃԱԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ

ՀԱՇՈՒԵԿՇՈՒ				ՊԱՀԱՎԱՐ	
ՊԱՐՏԾՔ				ՊԱՀԱՎԱՐ	
Թղթադրամ առ. Զանազանս	540048	10	Թղթադրամ Զանազաններէ	521688	5
Ողջ ստակ	547945	55	Ողջ ստակ	247088	55
				558777	
			Պատրաստ ստակ	2255	10
			Կշիռ. (բաց պարտք)	546925	55
	887954	5		887954	5

Այս հաշուեկշուն կ'երեւի արդարեւ որ Աղդը 346923 զուրուշ թղթադրամ եւ ողջ ստակ խառն բաց պարտք ունի, այն պայմանաւ որ 538777 զուրուշի պահանջմար ամբողջապէս

* Տես երես

կեդրոնական Անտուկը թափուին, Բայց Քաղաքական ժողովը կ'ուղէ դիտել թէ՝ այս պահանջքը որ Առաջնորդական եւ Ս. Երուսաղիմայ տարեկան յետնեալ տուրքերէ, նոյնպէս Մայրաքաղաքիս Եկեղեցեաց Քանչէտ անուամբ տուրքէ եւ մումագիններէ պիտի գոյանան, գրեթէ մեծաւ մասսամբ անցոյս, անհաստատ եւ քննելի են, իսկ միւս կողմէն 887934 զուրուշ պարտքը, որ թղթագրամի մասէն զեղջմամբ կը մնայ 685426 զուրուշ, հաստատոն է եւ հասուցաննելի, որով կեդրոնական Անտուկին 346923 զուրուշ բացը հարկաւ աւելի եւս ծանրացած կըլլոյ.

Կեդրոնական Անտուկին այս ձախորդ վիճակը Վարչութեան ընթացքը խանգարեց եւ իր վրայ առած բեռը այն քան ծանրացուց որ մեծ վհատութիւն եւ յուսահասութիւնն պատճառեց :

Քաղաքական ժողովը փորձով համոզուած է որ Ամենա հաղորդական մեքենան ազնիւ եւ ընտիր մեքենայ մ'է իր իւրաւանցը եւ պարտուցը զգացումը կրող արթոն ժողովուրդ մը գէպ ՚իյառաջադիմութեան արահետը մղելու, սակայն երբ անոր մղիչ զօրութիւնը, որ է Ելմուական վիճակը, կը մնայ ուր որ է հիմայ, այն մեքենան ալ գրեթէ անշարժ կը մնայ : Ազգասիրական եռանդ ու ջանք անզօր են այս անշարժութեան գէմ մաքառելու, անձնուիրութիւննը վհատեալ ետ կը քաշուի եւ եղած բարեկարգութիւնները ապագա յին մէջ հիմ չեն բռներ, ըւստի կամ պէտք է Վարչութեան ծախութ չափաւորել եւ Անտուկին անխախտ մուտքին հաւասարել, թէեւ այս կարգադրութիւննը ներկայ սահմանադրամութեանը պատճառ է առաջանական անհրաժեշտ պիտից ժամանակ կը թուի կատարել, եւ կամ ընդհանուր տրոց օրինաւոր բաշխուման եւ հաւաքման գործնական եղանակի մը հաստատութիւնը փութացունել եւ մոից աղբիւները աւելցունելով ապագա սյին մէջ կեդրոնական Անտուկին հաւասարակշռութիւնը ապահովել:

Այս ճշմարտութիւնը՝ թէեւ ամենուն յայտնի, պատկառ կ'ուղի ժողովցոյդ բարձր հեղինակութեան կը պատկանի գործադրել, որպէս զի յաջորդ Վարչութիւնները առանց մոտա-

տանջութեան շարժին իրենց սահմանին մէջ՝ Քաղաքական
ժողովը այս խորհրդածութեամբ միտք չունի պատկառելի
ժողովդ իր գործառնութեանց ամբութեան պատրաստել եւ
ոչ ներազանութեան իրաւունք մը գանելու փորձ փորձել,
այլ իր ազգային պաշտօնական մարմին մը, որ իր պաշտօնին
կարեւորութիւնը ճանչցած էր, եւ որմէ հրաժարելու կը
պատրաստուի, կը վշտակցի որ բոլոր իր յօժարաւթեամբը չի
կրցաւ յաղթել այն գժուարութեանց, որոնք դրամի պակա-
սութենէն եւ երեքմն ընարեալ ազգային պաշտօնէից ան-
տարրերութենէն յերեւան կ'ելնէին.



ՀԱՆՐԱԿԱՆ

Քաղաքական ժողովը՝ որուն էական պարտաւորութիւնը
ներէն մէկն էր, ազգային ընդհանուր բարեկարդութեանց
խնդիրներու վրայ խորհիլ եւ անոր մտաւորական եւ նիւթա-
կան շահերուն ապահովութեան եւ զարդացման պարագիլ,
իր վարչական ներքին հոգերուն շատութենէն եւ պարագա-
յից բերմունքէն, չի կրցաւ, ինչպէս որ արժանն էր, իր ու-
շադրութիւնը այն ծանր եւ կարեւոր խնդիրներուն վրայ
դարձնել եւ գործադրութեան օրինաւոր յատակադիմ մը
ուրուագրել:

Ազգային Սահմանադրութեան գործադրութիւնը մինակ
երեւելի հայաբնակ քաղաքներու մէջ սկսուած է, Ազգային
դաստիարակութիւնը քանի մը բացառութեամբ՝ Գաւառնե-
րու մէջ նյն նախնական ամսուլ եւ անկերպարան դրութեան
վրայ կ'ընթանայ, Ազգային կալուածոց, Վանօրէից եւ այլ
հաստատութեանց վիճակը ապարդիւն եւ գրեթէ թափուր
ու ամսյի կը մնայ եւ անոնց եկամուից եւ հասոյթից մատա-
կարարութիւնը առանց հսկողութեան. եւ աեղ աեղ Գաւա-
ռաբնակ ազգայինները ստացուած քի, կենաց եւ պատոյ
ապահովութենէն զուրկ, եւ հարատահարութեանց ու անի-
րաւութեանց ենթակայ.

Քաղաքական ժողովը գոնէ ներկան ապահովելու մտադիր՝ երջանիկ կը համարէր զինքը երբ իրեն ներկայացող ընդհանրութեան վերաբերեալ խնդիրները կը լուծէր, յաջորդ վարչութեանց թողլով Ազգին ապագայ վիճակը յարդարելու ժամանակի եւ յարատեւութեան կարօտ գործը:

Ուստի Քաղաքական ժողովը այս հանրական խնդիրներուն մէջէն կարեւորագոյն խնդիրները համառօտիւ յառաջ կը բերէ:

Քաղաքական ժողովը վերահաստատեց Սահմանադրութեան երկրորդ գործադիր Յանձնաժողովը, որուն ձեռօքը թաղական խորհրդոց եւայն կազմութեան համար կառարելադրութեամբ Ա. Տնօրինութիւնը Առաջնորդաց զրկեց, որ մեծամեծ գժուարութեամբ երեւելի Գաւառուաց մէջ դորադարուեցաւ:

Սահմանադրութեան
գործադրութեան
խնդիր պատճեաց
մէջ:

Եւ ըստ որում առաջնորդական մանր բաժանմանց արդի զրութիւնը՝ տղիսութեան, վաղեմի բունութեան եւ ներքին կուսակցութեանց յարուցած մեծ գժուարութիւններուն վրայ, մեծագոյն գժուարութիւններ կ'աւելցունէր Գաւառական վարչութեանց նորոդ կազմութեան համար, Սահմանադրութեան գործադիր Յանձնաժողովը՝ Առաջնորդութեանց թիւը Տէրութեան կուսակալութեանց թուղն վերածելու նպատակուածարհածոցոց սրագրեց, որն որ թէեւ Քաղաքական ժողովին կողմէն ընդունուեցաւ քանի մը դիտութեամբ, բայց կրօնական ժողովը Առաջնորդական վիճակաց նոր յատակագիծը անզործադրելի, խռովութեանց զրգուիչ եւ թերեւս հաստատեալ Առաջնորդութեանց շահուն անհամաձայն դանելով՝ Քաղաքական ժողովոց խորհրդութովը Խառն Յանձնաժողովի մը քննութեան յանձնեց զայն: Եւ Խառն ժողովը յիշեալ Յանձնաժողովին տեղեկագրին վրայ որոշեց:

Ա. Առաջնորդական վիճակները իրենց ներկայ դրից մէջ պահել, այն պայմանաւոր Առաջնորդները բազմահայ քաղաքներու մէջ նստին եւ ոչ կուսակալին կամ կառավարչին նստած քաղաքը:

Բ. Խառաքանչիւր առաջնորդական վիճակի մէջ Երեւիսաւ:

նական, կրօնական եւ քաղաքական ժողովսեր հաստատել.

Դ. Մանր Առաջնորդութիւնները գոնէ քաղաքականորէն մօտակայ Առաջնորդութեանց մէկուն հետ միացունել, որ իրենց ազգային գործերը նոյն դաւառին ազգային վարչութեան միջնորդութեամբ տնօրինուին:

Քաղաքական ժողովը գործադիր Յանձնաժողովին պատրաստած Բ. Տնօրինութիւնը երեւելի եւ բազմահայ դաւառաց դրկեց, որուն գործադրութեան կ'զբաղին, ինչպէս որ այս խնդրոյն վրայ գրուած յատուկ Յայտագրէն՝ մանրամասնարար կ'երեւի. սակայն գաւառական ներքին երեւափոխանաց ընտրութեան գործը Բ. Տնօրինութեան գործադրութեան դժուարութենէն դեռ եւս երկարելու կ'սպառնայ:

Քաղաքական ժողովը այս կարեւոր խնդրոյն վրայ ընդհանուր ժողովոյդ ուշադրութիւնը կը հրաւիրէ, որուն խնդրոց կարգն է, դիտելով որ Տէրութեան դաւառաց նորաձեւ բաժանման առթիւ Առաջնորդական վիճակաց աշխարհագրական շփոթ բաժանու մն ալ նոր գրութեան վրայ հետզետէ հաստատելու հարկը պիտի տեսնուի:

Քաղաքական ժողովը խառն ժողով կազմելով՝ իր նախորդին ուղարձ հրահանգաց համաձայն Ա. Երուսաղիմայ Միաբանութեան կողմէն պատրաստուած եւ հասած գատրիարքական ընտրելեաց եւ այլ գործողութեանց վերաբերող Տեղեկագիրերը աչքէ անցուց, օրինաւոր գտաւ, եւ նոյն միջնութիւն Ա. Երուսաղիմայ միաբաններէն Գաղատիոյ նախկին Առաջնորդ գեր. Մկրտիչ Եպիսկոպոսին անմիջապէս Միաբանից կարգը դաստելու համար ըրած խնդիրը ձեռնհաս իշխանութեան թողով լուծել՝ դադունի քուէարկութեամբ՝ 1864 թուլիս 30 ին ըրած Բ. Նիստին մէջ երեք ընտրելեաց ցուցակ պատրաստեց եւ ընդհանուր ժողովոյդ ներկացացուց: Գերապատիւ Եսայի Վարդապետը Ա. Երուսաղիմայ Ամուսոյն Պատրիարք ընտրուելէն ետեւ՝ Քաղաքական ժողովը պէտք եղած տնօրէնութիւնը ըրած այս ընտրութիւնը Բ. Դրան, Ա. Երուսաղէմի Միաբանութեան եւ Աղդին հրատարակելու եւ

* Տես Երեւ

երկու հրաւիրակ դրկելով՝ նորընտիր Պատրիարքը Մայրաքաղաքու հրաւիրելու համար։ Ա. Էջմիածին գնալով՝ Եպիսկոպոսութեան աստիճանը ստանալուն ետեւ՝ վերադարձաւ Ա. մերապատիւ Եսայի Եպիսկոպոսը՝ եւ Ա. Երուսաղիմայ կանոնագրին վաւերացման վրայ, Քաղաքական ժողովին միջոցաւ իր Պատրիարքական հրովարտակը եւ Տէրութեան չնորհած Ա. աստիճանի Պատուանշանը առնելով Մարտի 23ին ուղեւորեցաւ գէպ՝ ի Ա. Երուսաղէմ։

Այս առթիւ հարկ է յիշատակել որ Ա. Երուսաղիմայ վանուց առ Վարչութիւնն ունեցած քանի մը տարուան հին պարտուց խնդիրը, զոր կանոնագրին քննութեան ժամանակ ընդհանուր ժողովու Քաղաքականին յանձնած էր որ այս մասին իր կարծիքը յայտնէ, ժամանակ չունեցաւ քննելու եւ իր աեղեկագիրը ներկայացունելու։ Ուստի յաջորդ Ժողովին կ'ինայ այս պաշտօնը կատարել։

Սահմանադրութեան 13^ր եւ 14^ր յօդուածոց համաձայն՝ Ազգահամար Քաղաքական ժողովը Գլւանապետին տուաջարկութեան վրայ թէ կ. Փօլոյ եւ թէ Գաւառապետնակ ազգայնոց ազգահամարի տուամբները շինել տաղով մէկ մէկ օրինակ խնդրել որոշեց եւ այս մասօք յատուկ շրջաբերականներ ուղղուեցան թաղական խորհրդոց պէտք եղած հրահանդը հաղորդելով՝ գտաւուաց Վարչութիւնները հաստատուելուն ետեւ՝ անոնց ալ դրկելու արամագրութեամբ։ Սակայն գեռ արդիւնք մը չը տեսնեաւեցաւ թաղական խորհրդոց կողմէն։

Այս գարուս մէջ գերեզմանատանց խնդիրը մերայնոց համար ծանրակշիռ խնդիր մը գառնալով՝ այն սուրբ եւ խաղաղական վայրերը երբեմն ցաւալի կռիններու ասպարէղ եղած են եւ թէ Մայրաքաղաքիս եւ թէ Գաւառներու մէջ անոնց նկատմամբ բացուած գատերուն մէջն մերայինք գրեթէ միշտ բարոյական եւ նիւթական վնաս կրելով եղած են։

Ազգը անխորհուրդ ներողանութեամբ եւ երբեմն աններելի թոյլութեամբ իր սեփիհականութեանց օտարները հաղորդ ընելով՝ շատ անդամ ստիպուած է դատաստանի գիմել աիրանալու համար այնպիսի իրաւանց որոց՝ ի ընէ անտի տէրն ինքը եղած է։ Այս տեսակէն է նաեւ խորիւտարի

գերեզմանատան սեփհականութեան խնդիրը , որուն թոյները մասնակից ըլլալու կանգնեցան յարքունուստ տրուած հրավարտակաց հակառակ , որով նոյն սեփհականութիւնը Հայոց չնորհուած էր :

Չորս տարիէ ՚ի վեր Խոսկիւտարի թաղական խորհուրդները ազգովին կարգուած վախանորդի մը ձեռոք այս դատը կը վարէին Յունաց գէմ , որոնք կուզէին ամբողջ գրաւել Գերեզմանատան այն մասը՝ ուր Հայոց հերասիրութեամբը թաղուած մեռելոց յանական ասապանագիրերը կ'երեւային : Հակառակ կողմը կերպով մը դատը երկարածգելու կ'աշխատէր : Եւ ըստ որում խնդիրը հանրական կերպարանք մը առած էր , Քաղաքական ժողովը փութաց եօթը բանիրուն անձերէ բաղկացեալ Յանձնաժողովով մը կազմել եւ անոր միջոցաւ Ազգին իրաւունքը պաշտպանել Յանձնաժողովը թէ անձամբ եւ թէ փոխանորդաբար Տէրութեան դատասատանական Ատեանին առջեւ դատը շարունակեց եւ յոյս ունէր Հայոց նպաստաւոր վճիռ մը ձեռոք ձգել ըստ իրաւանց , երբ յանկարծ Յունաց կողմէն նոյն գերեզմանատան մէջ զ ործուած սրբապղծութեան դէպք մը դատասատանին ընթացքը խանդարեց եւ այն չափ գրգռեց ազգայնոց կրօնական զգացումը եւ գայթակղեց խիղճերը որ խնդիրը ծանր եւ խռովայրյղ կերպարանք մը առնելով՝ Ատտիկանութեան միջամտութիւնը հարկ եղաւ գերեզմանէն յոյնի մը ձեռոք հանուած հայ պատահեց մը դիակը նորէն թաղելու եւ անդորրութիւնը հաստատելու համար : Խակ երկու կողմէն ալ մաղմաթիւ անձինք , որոնք իրեւու սկզբնապատճառ խռովութեանց ամբատանուած էին , բանտարկութեան դատապարտուեցան եւ քննութիւնները սկսան :

Ա. Պատրիարքը խռովութեան ժամանակ անձամբ ամեն ջանք ՚ի գործ դրաւ յուզեալ կիրքերը խաղաղելու եւ վերջէն բանտարկելոց համար կրկին եւ կրկին գրաւոր եւ բերանացի բարեխօսութիւն ընելով Տէրութեան Նախարարաց մօտ , յաջողեցաւ անոնց աղաստութիւնը ձեռոք ձգել : Բայց երբ գերեզմանատան դատը նորէն Շէյխ-իւլ-Խալամին գուռը ներկայացաւ , դատաւորը երկու կողմը իրաւախոհութեան յոր-

Դորեց եւ վերջապէս Գերեզմանատան մէկ փոքր մասը Յունաց սեփհականութիւն համարելու որոշումը ազգային փոխանորդին բերնով Քաղաքական ժողովին հաղորդեց. Քաղաքական ժողովը անմիջապէս նոյն անձին միջոցաւ բողոքեց առ Դուռն Շէյխ-Խէլ-Խալամի եւ խնդիրը այնպէս բողոքի տակ մնացած է ցարդ՝ եւ Ազգային Պատրիարքարանը այս մասին 'ի պաշտօնէ հրաման առած չէ տակաւին Բ. Դոնէն :

Ազգային կալուած քնները՝ որ ազգային զանազան հաստատութեանց կը վերաբերին Ցէրութեան կալուածական օրինաց համաձայն մասնաւորաց վրայ դարձունելու տրամադրութիւնը գործադրելու ատեն՝ շատ անդամ այն աւանդապահ մասնաւորաց ձեռքէն ապահովագիր առնելու զանցառութեան եւ կամ անոնց մահուամբը ծագած կորուստին կամ դժուարութեանց մէկ օրինակը կրնայ համարուիլ մեր նոր դիւզի հողային սեփհականութիւնը՝ որուն կէսը հանձնուինկած էր աւանդապահ ձէզայիրկեան Մկրտիչ Ամիրային մահուամբը .

Այս վէճի տակ ինկած բաժինը ազգային կալուածք ըլլալը հաստատելու համար տաս տարիէն աւելի էր որ Ազգային Պատրիարքարանը կ'աշխատէր եւ Բ. Դրան հետ թէ բանիւ եւ թէ գրավ կը բանակցէր. առաջին Արքունական նպաստաւոր հրաման մը ստացած էր եւ անոր գործադրութիւնը կը յապաղէր: Վերջապէս Քաղաքական ժողովն ալ իր կողմէն ամեն ջանք 'ի գործ դնելով յաջողեցաւ երկրորդ անդամ Արքունական հրամանադիր (իրատէ) ստանալու:

Նոյն հրամանադրին ուժովը Ազգը ամբողջապէս տիրացած է Նոր դիւզի հողային սեփհականութեան: Սակայն անոր վերաբերեալ կալուածագիրը Լէտոնի Դրան միջոցաւ շինել եւ վսեմ: Երամեան գէորգ պէյին վրայ դարձունել տալու աշխատաթիւնը Մեծ. Եազրուպեան Եազրուպ էֆէնտիին յանձնեց եւ վսահն է որ քիչ ատենէն այս կարեւոր գործը վախճան կ'առնու:

Նախարդ Քաղաքական ժողովոյ ընտրութեամբը Ցէրութեան Հասարակաց կը թուան ժողովոյ ազգային սահմանուած անդամ Ազգին կողմէն՝ վսեմ: Գրիգոր Օտեան էֆէնտիին Ցէրութեան

պաշտօնով դուրս գացած՝ եւ Քաղաքական ժողովը կողմէն վսեմ: Ապանեան Սաեւիան պէջ հրաժարած ըլլալով՝ Բ. Դրան հրամանաւ Քաղաքական ժողովը նոր ընտրութեան ձեռնարկեց եւ Ազգին կողմէն վսեմ: Ապանեան Սաեւիան պէջ եւ ժողովին կողմէն վսեմ: Բարունակ պէջ ֆէրուհ անդամսահմանեց:

ՀՀ այս կարուածքն
արքունի որոց
պահանջում

Բէրայի Քաղաքակեռական ժողովին կողմէն ըստ նոր կանոնաց տեղեղին ազգային կալուածներէն արքունի տուրք պահմնչուելուն խնդիրը Թաղական խորհրդոյն միջոցաւ Քաղաքական ժողովին ու շաղրութեան առարկայ ըլլալով՝ Ժողովը հարկ սեպեց Բ. Դրան հետ այս մասին բանակցիլ եւ ազգային կալուածները արքունի տուրքէ՝ ՚ի վաղուց անտի զերծ ըլլալուն արտօնութիւնը յիշել: Սակայն Բ. Դուռը պատասխանեց թէ ազգային եկեղեցիներուն, վարժարաններուն, հիւանդանոցներուն եւ այլն տեղերը միայն ազատ պիտի մնան այն տուրքէն. իսկ անոնց յատկացած կալուածները պարտին արքունի տրոց ենթարկիլ: Քաղաքական ժողովը Պատրիարքական Հրովարտակին մէջ նշանած տրամադրութեան մուժ ժողովը թէ եւ վերստին յայտագիր ուղղեց առ Բ. Դուռն, բայց մի եւ նոյն հրամանը ստացաւ:

Տերութեան
պատմական
պահանջում:

Ծատ որում Ցէրութեան Պատժական կանոնաց տեղեկութիւնը հարկաւոր է մանաւանդ մերաղնէց այն մասին որ ստէպ չդիտութենէ այլ եւ այլ դատապարտելի դործողութեանց ենթակայ կը մնան եւ Ազգին անուան արատ կը բերեն, Քաղաքական ժողովը արժան դատեց Ցէրութեան Պատժական կանոնագիրը յատուկ պայմանաւ մը Մասիս լրադրոյն միջոցաւ հրատարակել աշխարհիկ պարզ լեզուի թարդմանել եւ յետոյ ամբողջապէս դատ տեարակ կաղմել տալով եւ տարածել:

Հորաբաժնի տուրք:

Քաղաքական ժողովը՝ ըստ սովորութեան Բ. Դուռէն ամեն տարի ՚ի Պատրիարքարան ուղղուած հրամանագիրը՝ Մայրաքաղաքին Հայոց զօրաբաժնի տրոց նկատմամբ՝ ստանալով նախորդ Ժողովին օրովը կաղմուած եւ Հռովմէական եւ Յունական Պատրիարքարանաց հետ բանակցելով այս խճնդրոյն վրայ համախորհուրդ պատասխան մը պատրաստելու պաշտօն ունեցող Յանձնաժողովին կարծիքը եւ իր

Ատենագրութեանց մէջ արձանագրեց ՚ի հարկին ըստ այնմ՝
շարժելու համար :

Աղդային կտակաց օրինաւոր եւ անթերի դործադրու Աղդային կտական
թիւնը ոչ միայն նուիրական պարտք այլ եւ Աղդին շահուցը
նպաստաւոր եւ այսպիսի բարեգալաշտական դործառնութեանց
ապագային մէջ քաջալերութիւն եւ ապահովութիւն մ'ըլլա-
լով՝ Քաղաքական ժողովը փութաց իր առջեւը եղած կտակի
խնդիրները կտակաց հոգարածութեան կարծիքն առնելով
քննել :

Եազրքնեան գերդաստանին կողմէն Մայր եկեղեցւոյ եղած սազմեան կտակ
յիսուն հազար զուրուշի արժեք ունեցող կտակի մը խնդիրը՝
որ Տեղապահ Արքաղանին կոնդակաւը վաւերացած էր, կախ
կը մնար, Նախարդ Քաղաքական ժողովը թէ հրիստակապահ
Եազրքնեան քերտովք եւ թէ կտակակատար Մէլիքեան
Մէլիքիսէթ աղստից հետ բանակցեր ու թէեւ քերովք աղա-
յէն քանի մը ամիս պայմանաժաման յիշեալ գումարին վճար-
ման խօսք առեր է, սակայն սյս խստումը անկատար մնա-
լուն զոնազան պատճառանոք՝ Քաղաքական ժողովը՝ Մաս-
նաժողովի մը միջոցաւ խնդիրը վերստին քննեց եւ տեղեկա-
կացաւ որ արդարեւ այնպիսի կտակ մը եղած է բանիւ հան-
գուցեալ կիւլլապեան վառվառ տիկնոջ կողմէն եւ անոր
գուստորը այս հրիստակը կը հաստատէ, սակայն արժեթղթոց
գնոյն անհաստատութիւնը պատճառ բերելով նոյն գումարը
անմիջապէս հաստոցանել կը մերժէ, որուեց պէտք եղած մի-
ջոցները ՚ի դործ զնել կտակին դործադրութեան համար :

Եփիպոտի անսուանի աղդայիններէն վանցի կարապետ գալու սահման կտակ:
աղա Գալուստեանը վախճաններէն առաջ՝ վաւերական եւ օ-
րինաւոր կտակ մը թողուց, որով թէ իր ժառանգաց եւ
թէ զանազան անձանց իր ստացուածքէն բաժին հանելէն ե-
տեւ՝ աղդային մանկուոյն գարդացումը նպատակ ունեցող
պայմաններով մեծագումար արժողութեամբ կալուածքներ
Աղդին նուէր ձգեց, Քաղաքական ժողովը՝ ՚ի պաշտօնէ ոյս
լուրը եւ կտակագրին վաւերացեալ պատճէնը ստանալէն ան-
միջապէս ետքը՝ իր Բ. նիստին մէջ պէտք եղած հրահանգը
ուղղեց առ որ անկ է, ըստ կտակին աղդին իրաւունքը ա-

սպահովելու եւ ժառանգաց բաժինները հաստուցանելու հաւաքար : Բայց դժբաղդաբար զանազան ցաւալի սպարագաներ՝ եւ մանաւանդ համեստուցելոյն մէկ ժառանգորդին կողմէն կտակը եղծելու համար եղած փորձը՝ այս առթիւ Եղիպատոսի մէջ յուղուած հին կիրքերը եւ երկպառակութիւնը եւ կտակագրին մէկ քանի մասին կէտերուն վրայ տրուած այլ ընդուցութիւնները՝ բարերարին վերջին սրբազն կամաց անմիջական գործադրութեան արդելք եղան : Ուստի Քաղաքական ժողովը այս աղդավանս վիճակին դարձնն բերել մոտածեց Խառն ժողովով Եղիպատոսի ծերունի Առաջնորդին իրը փոխանորդ Գերապատիւ Մկրտիչ Եպիսկոպոսը կարդելով եւ յասուկ Մասնաժողովի մը միջոցաւ կտակագրին ամեն կէտերը լուսաբանելու : Եւ կտակին այս բացատրեալ ցուցակը՝ նոյնապէս պէտք եղած հրահանգը տարով Գերապատիւ Մկրտիչ Եպիսկոպոսը Եղիպատոս զրկեց :

Եմին քէշիքի Նոյնապէս սոյն փոխանորդին յանձնեց հանգուցեալ բժիշկ կամին քէշիքի մօտ երկու հաղար ոոկեւց աղդային կտակին գործը կարդի դնել եւ թէ առ Եղիպատոսի Վաեմ: Փոխարքայն եւ թէ առ Մեծ: Նուպար վաշայն պէտք եղած յանձնաբարական գիրեր ուղղեց յիշեալ կտակաց աղդովին մնօրէնութեան իրաւասութիւնը պահպանելու, տեղոյն մնդորդութեան եւ կտակաց անթերի գործադրութեան համար անոնց պաշտօնական եւ աղդասիրական միջնորդութիւնը հայցելու :

Քաղաքական ժողովը կը ցաւի յայնել թէ Գերապատիւ Մկրտիչ Եպիսկոպոսը Վարչութեան ահնիալութեանց ըլ պատասխանեց : Բոս որում Եղիպատոսի երկպառակութիւնը աւելի զայրագին կերպարաննք մը առած՝ եւ կտակաց գործադրութիւնը դեռ եւս կիսկատար մնացած է :

Քաղաքական ժողովը՝ Տնտեսական խորհրդոց կողմէն իւմանալով որ հանգուցեալ Միսաքեան Յակոբճան աղան իր կենդանութեան ժամանակը Աղդին կտակ մը ըրած է եւ այս կտակը Մեծ: Միսաքեան Վարդերես էֆէնտիին մօտ աւանդ կեցած է՝ արժան գատեց աւանդապահին հետ բանակցիլ: Այս կտակագրէն՝ որ աւանդապահին ձեռօք կնքեալ ներ-

կայսցաւ՝ ժողովը վերահասու եղաւ որ կտակարարը թէ աղքային Հիւանդանոցի նուիրած 250 հազար, թէ խասդիւզի վարժարանին 20 հազար եւ կէտիկ բաշայի վարժարանին 10 հազար զուրուշը՝ շահեցունելով տարուէ տարի գոյացած արդիւնքը յիշեալ հաստատութեանց յանձնելու իրաւունքը ու պաշտօնը կտակակատար Մեծ. Միսաքեան Նիկողոս աղայի գերդաստանին տուած է:

Ուստի՝ թէ եւ Քաղաքական ժողովը Հիւանդանոցի կտակակալեալ գումարին պարտամուրհակին վճարումը կտակարար բարերարին որդի Միսաքեան Աւետիս աղային պահանջելու համար քանիցս անդամ հրաւեր զրկեց, սակայն Աւետիս աղայի մահը վրայ համնելով այս կտակին դորժադրութիւնը կախ մնաց:

Բայս որում Սամուէլ Մուրաստայ կտակին արդի դորժադր սամուէլ Մուրաստայ կտակարար Բարերարին վերջին կամքը բռնաւրարուած եւ Աղդին ընդհանուր մանկաւոյն ծանր զրկանք եղած է նոյն կտակը ըստ հաճայս մինչեւ ցարդ դորժադրութ վէնէտիկի Միսիթարեան Միաբանութեան կողմէն, Քաղաքական ժողովը անոր անթերի դորժադրութեան միջոցները դանելու եւ ըստ այնմ պարտ ու պատշաճը անօրինելու նպատակաւ կատարաց հոգաբարձութեան խորհրդով Մասնաժողով մը կազմեց:

Փարիզի վարժարանը՝ որ Գերապատիւ Այլվազեան Գարեգին վարժարանի գումարին մասնաւոր ձեռնարկութեամբը ասկէ զրեթէ ութ տարի առաջ հաստատուեր էր, դոցուելէն եւ տեւ՝ հայազդի եւ օտարազդի անհատներ՝ սոյն վարժարանին Տեսչութեան իրենց փոխ տուած տոկոսաւոր ստակները, որ մեծ գումարի մը կը հասնի, Աղդէն պահանջելու եղանք. Դրան միջնորդութեամբը. եւ ըստ որում վարժարանին վերաբերող այս պարտքը երբէք ազդային Պատրիարքարանի գիտութեամբը եղած չէ, հարկաւ վարչութիւնը սոյն պարտքը չէր կնար իրեւ ազդային պարտք ճանչնալ. Հետեւապէս այս պահանջման անտեղութիւնը յայտնելու համար՝ Բ. Դրան հրամանաց համեմատ նախորդ Քաղաքական ժողովը ազդովին փոխանորդ կարգեր էր Մեծ. Մինասեան Եփէնտին,

որ Տէրութեան առեւտրական Ատեանին առջեւ այս պարտուց ինդիրը պարզեր եւ յանուն Ազգին եղած չըլլալը մէեւ հաստատեր է, սակայն բանաւոր պատճառաւ իր հրաժարականը Բ. Գրան մասուցանելուն՝ Ժողովը անոր տեղը կարգեց Մեծ. Եազուպեան Եազուպ էֆէնտին՝ որպէս զի այս գործին վերջնական տնօրէնութեան աշխատի, ու արդիւնքը Վարչութեան հաղորդէ:

*Խոզոյիկ առերած
եկեղեցին:* Քաղաքական ժողովը Պուքրէշի ազգային հոգարածութեանէն՝ Խոզոյիկ առերակ Եկեղեցւոյ դաւթին մէկ մասին մասնաւոր անհատի մը կտղմէն եղած դրաւման եւ այս գրաւումը դատաստանաւ վճռուած եւ պամանաժամաւ այս վճի ու գործադրելի ըլլալուն յայտագիրը առներով՝ անմիջապէս Պուքրէշի Բ. Ատեանին բարոքելու դիտմամբ Ա. Նախադահին միջոցաւ նամակ մը ուղղել արժան դատեց առ վսեմ. Գուղա պէն, Ազգին սեփհականութեան իրաւաց դէմ Խոզոյիկի դատորանին մէջ եղած վճռոյն գործադրութիւնը արդիելու համար. Սակայն այս բանակցութեան արդեանց վրայ Ազգային Պատրիարքարանը դեռ տեղեկութիւն մը չստացաւ:

*Աահմանագրութեան
մերաբնութեան
ինդիր:* Բնդհամութ ժողովոյդ անցեալ տարուան Յունիս 26 ի նիստին մէջ ըրած որոշումը գործադրելու համար Քաղաքական Ժողովը արժան դատեց շրջարերական դիրեր ուղղել առ աղջային Ժողովս եւ Խորհուրդու, խնդրելով որ իրաքանչիւր դիւան ոչուալանեաց պէտք մը բանայ եւ երբ փորձառութեամբ Աահմանագրութեան ինչ ինչ տրամադրութեանց նկատմամբ գործադրութեան գժուարութիւններ կամ դիտողութեան արժանի կէտեր նշմարուին, ՚ի բայ առեալ Սահմանագրութեան հիմնական սկզբունքը, որ անփոփոխելի են, ըստ ամենական կանոնաց նոյն ոչուալանեաց պէտքն մէջ մանրամասն պարագայիւք յայտագրէ, որպէս զի երբ Բնդհամութ ժողովով վերաքննութեան յանձնաժողովը կազմուի, բոլոր ոչուալանեանց պէտքեւը խնդրուին եւ անոր նկատողութեան յանձնուին:

ԳԱԿԱՆԱԿԱՆ

Աղջային Փատրիարքարանի դաւառաց հետ ունեցած
յարաբերութիւնները՝ ՚ի փաղուց անտի բազմադիմի, խառն
բայց գժուարին եղած են, իսկ այժմ՝ հազրոգակցութեանց
օր ըստ օրէ ստացած դիւրութիւնը եւ սահմանադրական այլ
եւ այլ պիտոյքը գաւառական բորոք կարեւոր եւ ստէպ ան-
նշան գործ երն անդամ աղջային Փատրիարքարանի մէջ կը
կեղբօնացունեն, Նա մանաւանդ Առաջնորդական վիճակայ
մանր բաժանումը եւ տեղ տեղ Առաջնորդաց անփորձութիւնը
եւ անձեռնհաս տեսչութիւնը գործոց շատութեան եւ մե-
ծամեծ գժուարութեանց տեղի կու տան, Ծառ Սահմանադ-
րութեան գաւառական Վարչութիւնները հաստատել եւ ա-
նոնց դիւանական բարեկարգութիւնները՝ ՚ի գործ գնել տալլ
ովաշտօնական յարաբերութեանց կանոնաւոր ուղղութիւն մը
տարու միակ միջոցն էր, սակայն բաղադրական ժողովը գաւա-
ռաց մէջ քանի մը բացառութեամբ՝ այս կարգադրութիւնը
ները՝ ՚ի կատար հանելու համար յասուկ Տեսուչներ եւ Քըն-
նիներ կարգելու եւ ընդհանուր յաստակադիմ մը պատրաս-
տելու պէտքը կ'զգար, եւ այս պէտքը հոգալու համար ոչ
միայն գլխաւորապէս կեղբօնական Անսուկին նեղ վիճակը
այլ եւ ուրիշ պարագաներ արդելք կ'ըլլային, Հետեւապէս
ստիպուած էր՝ երբ Առաջնորդական վիճակաց մէջ աղջային
զանազան խնդիրներու համար խռովութիւն, գժուութիւն եւ
կամ Սահմանադրութեան գործադրութեան գժուարութիւննե-
ր ծագէին, այն տեղերուն մօտ գտնուող բանիքուն Առաջ-
նորդ մը իր Տեսուչ զրկել, կամ քննիչ Մասնաժողով մը կար-
գել, եւ եթէ այս միջոցները չէին օգտեր, վէճը բառնալու
եւ անդորրութիւնը հաստատելու համար հուսկ ուրեմն ամ-
բաստանեալ եւ դաստիարակ կ, Պօլիս կանչել, եւ կամ մեծաւ
գժուարութեամբ քննիչ մը այս կողմէն սահմանել կ'որոշէր:
Ընդհանրապէս գաւառաց կողմէն եղած գանդատները
Առաջնորդաց, աղջային այլ եւ այլ պաշտօնէից, հարստա-
հարութեանց եւ արքունի տրոց ծանրութեան կը վերաբերին,

Առաջնորդաց
կանոններ:

Բայտ որում Առաջնորդաց ոմանց դէմ շատ անդ ամ բողոք՝
ներ կը լսուէին, եւ երբեմն իրենց սահմանէն դուրս գործոց
խառնուելով գանդատանաց առիթ կ'ըլլային, լսա որում
քանի քանի անդ ամ այլ եւ այլ վիճակաց համար, ինչպէս
Խարբերդի, Մարաշի, Աւրֆայի եւայլն, իրեւ Առաջնորդք
խառն ժողովով որոշուած եկեղեցականներ այլ եւ այլ պատ-
ճառանոք վարչութեան որոշումը կը դժկամակէին 'ի գործ
դնել հովուութեան երթարով՝ Քաղաքական ժողովը կրօնական-
կան ժողովին ուշադրութիւնը հրաւիրեց անսաստ կրօնական-
ները կանոնապահութեան կոչելու եւ իր որոշումները յարգել
տալու կարեւորութեան վրայ եւ միանդ ամոյն առաջարկեց
Առաջնորդաց վերաբերեալ կանոնադրութիւն մը յօրինել ա-
նոնց կրօնական եւ Քաղաքական պաշտօնը ու պարտաւորու-
թիւնները ճզդ բանելով.

Առաջնորդական
գրութեանուն:

Եւ որովհետեւ Առաջնորդաց մեծ մասին կողմէն հասած
պաշտօնական գրութեանց ոճը երկար, ճապաղ եւ խառն էր,
որով իրենց առաջարկած խնդիրներուն խնասափյ շփոթու-
թիւն եւ կերպնական դիւանին ծանրութիւն կը պատճա-
ռէին, նոյնպէս թղթակցութեան եղանակը անկանոն կը շա-
րունակուէր, ժողովը արժան դատեց իր Նախորդին արդէն
այս մասին ըրած որոշումը յատուկ շրջարերականաւ յիշեցու-
նել Առաջնորդաց, այնպէս որ իրենց պաշտօնական նամակ-
ները համաւոտ, պարզ եւ հասկանալի ոճով գրեն. խնդիր-
ները զատ զատ եւ որոշ բացատրեն, եւ մէջմէկ թղթակից
գործակալ ցուցնեն Մայրաքաղաքին մէջ :

Գաւառական վիճակաց ոմանց մէջ անցած խոռվաթիւն-
ները, որ առէպ ծագում առած են նոյն կողմերուն Առաջ-
նորդաց անբաւական տեսչութենէն եւ Սահմանադրութիւնը
գործադրել տալու անփութութենէն, վանականաց անսաստ
ընթացքէն, ազգային հաշուի խնդիրներէն եւ երբեմն խոռ-
վասէր անձանց գրգռութենէն, խառն ժողովին ուշադրու-
թիւնը մեծ ապէս զրաղեցուցած են :

Առաջնորդիր:

Երբ Քաղաքական ժողովը Վարչութեան զեկը ձեռք ա-
ռաւ նկատեց որ իր Նախորդին անօրինմամբը Մուշի ծանր
խնդիրը գրեթէ լուծուած էր. գեր. Խրիմեան Մկրտիչ վար-

դապետը՝ իրեն դէմ եղած ամբաստանութիւններէն՝ յետ քննութեան անպարա ելած, Տարոնոյ դաւառին Առաջնորդ դութեան Գլակայ վանուց վանահայրութենէ բաժանումը ու բոշուած, այն Առաջնորդութեան, որմէ կամովին հրաժարած էր գեր. Խրիմեան վարդապետը. Բաղչչի Առաջնորդ գեր. Երեմիա վարդապետը եւ Վարագայ վանուց հետ յիշեալ վանահայրութեան գեր. Խրիմեան վարդապետը ահմանուած եւ այն վանուց կանոնագրութիւնը յօրինելու եւ անկից խոռվաթեանց դրգիռ եղող միաբանները հեռացունելու որոշումներ եղած էին:

Սակայն դեռ գեր. Երեմիա վարդապետը եւ չորս Միաբանները Մայրաքաղաքս կը դանուէին, կանոնագրութիւնը յօրինուած չէր. գեր. Երեմիա վարդապետին Առաջնորդական պաշտօնը Միաբաններէն մերժուած էր, մէկ կողմէն Միաբանութեան բոլոքները գեր. Խրիմեան վարդապետին եւ բաժանման դրութեան դէմ, միւս կողմէն ժողովրեան դանգասները Միաբանութեան դէմ ազգային Պատրիարքացանը նօր ՚ի նորոց կը յաճախէին եւ Տարոնոյ դաւառը վերըստին դժուութեանց ասպարէղ դարձունելու կ'սպառնացին:

Քաղաքական ժողովը կրօնական ժողովին հետ խորհրդ դակցելով սպառնացող չարեաց առաջը առնելու փութաց, ՚Նախ՝ հրաւիրեց գեր. Խրիմեան վարդապետը եւ չորս Միաբանները, որ բաժանման դէմ էին, Մշց Գլակայ վանուց վանահայրութիւնը Տարոնոյ դաւառին առաջնորդութենէն բաժանմեալ կամ անբաժան պահելու մասին իրենց դիտողութիւնները զատ զատ ներկայացունեն. եւ բաժանմանէն ծագելիք օգուտներուն համար գեր. Խրիմեան վարդապետին ներկայացուցած տեղեկագրին վրայ համոզուելով՝ Քաղաքական ժողովը բաժանումը կրկին վճռեց եւ խառն յանձնաժողովի մը միջոցաւ Առաջնորդութեան եւ Վանահայրութեան յարաբերութեանց համար շինուած կանոնները ընդունեց եւ վաւերացուց:

Բ. Նոյն Յանձնաժողովին գեր. Խրիմեան վարդապետին խորհրդովը պատրաստած Գլակայ վանուց յատուկ կանոնագրութիւնը ընդունեց եւ ինդհանուր ժողովոյդ վաւերացման

ներկանյացնելու որոշմամբ Գեր . վանահօր յանձնեց գործադադար թոթեան համար :

Գ. Բաղէշի Առաջնորդ Գեր . Երեմիա վարդապետը Բ. Դրան հրաժարաւակաւ եւ պէտք եղած հրահանգներով մի միայն Տարոնոյ Առաջնորդ կարդեց , Բաղէշի Առաջնորդութիւնը ուրիշի յանձնելու արամադրութեամբ :

Դ. Առ այժմ մինակ Մայրաքաղաքիս մէջ գտնուող չորս Միաբան վարդապետները Գլակայ վանքը չի դրկել եւ անոնց ճանապարհորդութեան ծախքը հոգալով ուղղակի կարնոյ կողմերը գտնուած վանուց մէջ ցրուել որոշեց . եւ Գեր . Խրիմ եան վարդապետը հրաւիրեց որ օր առաջ վերադասնայ 'ի Մուշ եւ իրեն հսկողութեան յանձնուած վանուց բարեկար գութեանց անմիջապէս սկսի . եւ եթէ երբէք այս վարչական տնօրէնութեանց անհնազանդ Միաբաններ գտնուին խսկոյն Ազգ . Վարչութեան ծանուցանելու հոգ տանի :

Բներից Բներից ազգայինք ստէպ գանգատաններ կ'ուղղէին առ Ազգ . Վարչութիւնն թէ՝ Սահմանադրական բարեկարդութեանց յա պարմանէ տեղւոյն ազգային գործոց մէջ տիրած շփոթութիւնը եւ մինչեւ անգամ Գաւառական Ա. Տնօրէնութիւնը գործադրել եւ Թաղական խորհուրդները կազմել տալու համար Գեր . Առաջնորդին ունեցած անհարողութիւնը եւ ժամանակէ մը 'ի վեր անոր եւ քանի մը նշանաւոր մերազնէից մէջ արմատացած գժուութիւնը ազգային քննիչ մը դրկելու կարեւորութիւնը կը ցուցնեն , Ամեն , Ա. Պատրիարքին կողմէն առ Գեր . Առաջնորդն Սահմանադրութիւնը գործադրելու պարտաւորութեանը վրայ քանի մը անգամ ազգու գրութիւններ ուղղուելէն ետեւ՝ Քաղաքական ժողովը արժան գատեց Ասոյ Աթոռուոյն վոխանորդ եւ Ատանայի Առաջնորդ Գեր . Արիստակէս Եպիսկոպոսին յայտնել իրաց այս վիճակը եւ խընդըելու որ պատեհ առթիւ դէպ 'ի Բներիս ուղեւորի :

Առաջնորդութիւն Բէպէտ հերուն Ռոտոսթօյի ազգային գործոց խառնակ ընթացքը , Սահմանադրութեան գործադրութեան մասին ծաղած գժուարութիւնները եւ տեղւոյն Առաջնորդին դէմ եղած բողոքները ստիպեր էին նախորդ Վարչութիւնը հետ զհետէ Ազգ . Մամբրէ վարդապետը իրեւ ժամանակաւոր

Քարողիւ եւ Արժ . Տ. Մարտիրոս քահանայն Սահմանադրա
կան դործողութեանց իրեւեւ քննիչ եւ դործադրիչ զրկել .
բայց ըստ որում Ռոտոսթօյի մէջ գժտութիւնը նորէն արծար
ծելով՝ ժողովրդեան մէկ մասը Առաջնորդին իրաւասութե
նէն դուրս դաստիարական խորհուրդ մը կազմեր , Ա. Փրկչի
Եկեղեցին սեփականներ էր եւ կրօնավորաթիւնան միտումներ
կը ցուցնէր . Քաղաքական ժողովը կրօնական ժողովին տե
ղեկագրին վրայ անմիջապէս գեր . Ներսէս Եպիսկոպոսը իր
բեւ լիազօր քննիչ եւ խաղաղաբար զրկեց ՚ի Ռոտոսթօ եւ
անոր խոհական վերատեսչութեամբը պառականեալ ժողովուր
դը առաջնորդական իրաւասութեան ներքեւ ամփոփեց . ու
րոշեալ պայմաններով գեր . Առաջնորդը իր պաշտօնին մէջ
պահեց եւ պէտք եղած կարգադրութիւնները ընելէն ետեւ՝
Արժ . Մարտիրէ վարդապետը մինչեւ Զատիկի լոկ քարողչու-
թեան պայտօն վարելու պայմանաւ Ռոտոսթօ յուղարկեց :

Խառն ժողովը՝ Եւդոկիոյ ժողովրդեան խնդրանաց համեր Առաջնորդական գովութիւնը:
մատ Հանէսեան գեր. Յակոր եպիսկոպոսին տեղ, որ Նախարդ.
Խառն ժողովին որոշմանը լիւ կեսարիոյ վանուց բարեկարդու.
թեան գործոց համար այն տեղ իրբեւ փոխանորդ. Առաջնորդի
զրկուած էր, ձգնաւորեան Արժ. Յակոբոս վարդապետը սահ Եւդոկիոս
մանեց, որ իր արթուն եւ խոհական տեսչութեամբը ամեւ.
նուն համարումը դրաւած էր: Գաղատիոյ Առաջնորդ գեր.
Մկրտիչ եպիսկոպոսը՝ որ այլ եւ այլ առաջնորդական գործոց
ազգային հաշիւներու պատճառաւ վիճակայնոց գանդառ
ներուն տեղի տուած եւ արդէն կ. Պօլիս կոչուած էր,
Յանձնաժողովի մը քննութեան յանձնեց եւ անոր միջոցաւ
հաշուի խնդիրը քննելու առեն՝ այս գործին համար Առաջ
նորդէն փոխանորդ մը առնելով՝ հարկ սեպեց զանի Եղիպատրուսուն
տոս զրիկել Արժ. Մանուէլ վարդապետին տեղ, որ իր պաշ
տօնէն դադրած էր: Իսկ Գաղատիոյ ժողովրդեան խնդրա
նաց համեմատ Հանէսեան գեր. Յակոր եպիսկոպոսը նոյն
վիճակին Առաջնորդ կարդեց, կեսարիոյ ծերունի Առաջնորդ կառարիս:
դին տեղ՝ Արժ. Եղիսա վարդապետը, Շատին Ղարահիսարի՝ Շատին Ղարահիսար
Տիգրանակերտի Արժ. Կարապետ վարդապետին տեղ՝ գեր.
Արքահամ վարդապետը, Խարբերդի փոխանորդ Արժ. Պետ

Էտաբրութ: ըստ վարդապետին տեղ՝ Արժ. Ահարոն վարդապետը Առաջ
նորդ սահմանեց: Խակ բարելոնի Առաջնորդ կարգեց Տիգրա-
նակերտոցի Արժ. կարապետ վարդապետը, հանգուցեալ Մես-
քարեւոն ըստ վարդապետին տեղ, որ իր ընտիր բարեմասնութիւննե-
րով իր հօտին սիրելի եղած եւ Սղերդի վերջին սրածու-
թեան ժամանակ սովալլուկ ժողովրդեան մը անձնուիրաբար
ժառայելով իր կեանքը զոհած էր:

Եղեսիոց Առաջնորդին եւ ժողովրդեան մէջ բաւական ա-
տենէ ՚ի վեր տիրած գժառութիւնը բառնալու համար Անթա-
պի Առաջնորդը այն տեղ իրբեւ քննիչ զրկելէն ետեւ՝ Ամե-
նապատիւ. Ա. Պատրիարքին հոգեստն Արժ. Ստեփան վար-
դապետը Եղեսիոց Առաջնորդ կարգեց՝ Գեր. Գրիգոր Եպիս-
էնքուշ: Հոպոսին տեղ, որ Ենքուշի Առաջնորդ կարգեցաւ տեղոյն
ժողովրդեան խնդրանոք:

Մարտաւ. Բայց Մարտաւի վիճակը դեռ առանց առաջնորդի կը մնայ: Արժէն նախորդ Ժողովին օրովը նոյն վիճակին Առաջնորդու-
թեան կոչուած էին Շանհիկու Առաջնորդ Արժ. Մեսքոս վար-
դապետը, Առաքել վարդապետը, Մանուէլ վարդապետը
եւայլն, որոնք զանազան պատճառաւ հետղհետէ հրաժա-
րական տուած էին եւ Քաղաքական ժողովը այս վիճակին
յարմար եկեղեցական մը ընտրելու համար քանից անդամ
կրօնական ժողովէն ընտրելեաց ցուցակ խնդրեց:

<sup>Հոգեւոր հոգին
՚ի Փարիզ:</sup> Քաղաքական ժողովը կրօնական ժողովին առաջարկու-
թիւնը նկատողութեան առնելով՝ վեհափառ կայսեր չնոր-
հիւը Փարիզ ուահան համար զրկուած հայազգի պատանեաց
եւ այն տեղը յաճախող ազգայնոց հոգեւոր պիտոյքը հայ-
թայիթելու նպատակաւ իրբեւ հովիւ որոշուած Արժ. Հիւն-
քեարագէէնտեան Տ. Յովհաննէս քահանային յարքունուատ
թոշակ սահմանել տալու համար պէտք եղած միջնորդու-
թիւնը ՚ի գործ դրաւ Տէրութեան առատաձեռնութեան դի-
մելով:

Սերաստիոց ժողովուրդը՝ իր Առաջնորդին վիճակէն հե-
ռանալու գիտաւորութիւնն իմանալով՝ վանուց հաշիւները
պահանջելու ելաւ եւ այս առմիւ մեծ տարածայնութիւն
եւ վէճեր ծագեցան: Քաղաքական ժողովը որոշմամբը եւ

զրկած հրահանգաց համաձայն Եւդոկիոյ Գեր . Առաջնորդը իր հետք տեղւոյն աղբային հոդարածուներէն երկու հաշուադէտ անձինք առնելով՝ փութաց ՚ի Սերաստիա Եւ յանձնաժողովը մը կաղմելով հաշխներուն քննութեան Եւ կարգադրութեան հսկեց , խաղաղութիւնը հաստատեց Եւ իր տեղեկադիրը Վարչութեան ղրկեց :

Պահարմացի վիճակին Առաջնորդ Գեր . Եգեսեան Յովլ Պահարմացին կանոնական կազմէն եղած առաջարկութեանց քրնչնութեան համար , որ վիճակին զանազան բարեկարգութեան գործոց կը վերաբերին , նախորդ Քաղաքական ժողովին օրով վը կաղմաւած Յանձնաժողովին տեղեկադիրը ներկայանարով՝ Քաղաքական ժողովը պէտք եղած դիտողութիւնները ընելէն ետեւ՝ զայն ընդունեց Եւ գործադրութիւնը Գեր . Առաջնորդին յանձնեց :

Քաղաքական ժողովը՝ Զմիւնիոյ ժողովրդեան մէջ Առորը Յանձնութիւնութեան կամաց առաջանական առաջիւ ծագած կրօնական խնդիրը ժամանակած լուծելու Եւ երկառուակութիւնը , որ օրի կը սաստիանար , բառնալու համար կրօնական ժողովին ուշադրութիւնը հրատիրեց . իսկ Բ. Դրան հրամանին համաձայն տեղւոյն Աքժ . Տ. Յովլանձնիս Եւ Տ. Յակոբ քահանաները ժամանակ մը կ. Պոլիս մնալու համար բեւ տալէն ետեւ՝ վերադարձուց :

Աստանայի Առաջնորդ Գեր . Արիստակէս Եպիսկոպոսը ժողովրդեան այլ Եւ այլ գործոց առաջիւ Տէրութեան օրինաց Եւ արդարութեան հակառակ՝ կրած զրկանքը անձամբ աղդային Վարչութեան ներկայացունելու դիմումի Մայրաքաղաքութեան , արքունի տրոց , վկայութեան , Եկեղեցւոյ շինութեան Եւ այլն խնդիրներոն կը վերաբերէին , քննութեան առաւ Եւ կարեւորադոյն խնդրոց համար յատուկ յայտագիրներ ուղղեց առ Բ. Դուռն :

Գեր . Տեղապահ Արբազմնին օրովը Ռենիոյ վերջին անցից Ա. Յիշտ քննութեան համար Բ. Դրան հրամանաւ սահմանուած Եւ Մարաշ գացող Յանձնաժողովին աղդովին կարգուած անդամ

Մեծ . Աղարէկեան Սարդիս էֆէնտին իր Մեծ . Պաշտօնակացաց հետ քննութեան գործը աւարտած եւ Մարտէն դարձած ըլլալով՝ Քաղաքական ժողովը վերահասու եղաւ որ նա իր փափուկ պաշտօնը ըստ արդարութեան , Տէրութեան օրինաց եւ տրուած հրահանգաց համաձայն կատարեր եւ քննութեանց տեղեկագիրը Բ. Դրան ուշադրութեան մասուցուեր է :

Ուստի այս առթիւ նախորդ Քաղաքական ժողովին տնօքինմամբը Մայրաքաղաքիս մէջ կազմուած յատուկ Մասնաժողովին , որ լիազօր պաշտօն ունէր այս կարեւոր խնդրոյն նկատմամբ պէտք եղած բանակցութեանց եւ կարդադրութեանց զբաղիլ , արժան դատուեցաւ իր գործողութեանց տեղեկագիրը խնդրել , եւ բանիւ պատասխան եկաւ որ գործին վախճանին կ'սպասուի տեղեկագիրը ներկայացունելու համար :

Պատմաստ Քաղաքական ժողովը Պրուսայի հրկիվեալ տառապելոց համար նպաստ հաւաքելու պաշտօնով արդէն կազմուած Յանձնաժողովը մէեւ նորոգեց՝ նոյն վիճակին Առաջնորդգեր . Գէորգ Արքեպիսկոպոսին առաջնորդիս թեան վրայ , սակայն այս կողմէն նշանաւոր արդիւնք մը չի գոյանալուն , Պրուսայի ժողովրդեան կողմէն եկած հանրադրով յայտադիր մը ուղղեց առ Բ. Պուռն տեղելոյն դպրոցին շինութեան համար նպաստ խնդրելու Տէրութենէն , որ իր սպավական վեհանձնութեամբը յիսուն հազար դուրս չնորհեց յիշեալ աղդօդուտ ձեռնարկութեան համար :

Աղդօդուտ Քաղաքական ժողովը կրօնական ժողովին խորհրդով Աղթամարայ Տ. Պետրոս կաթուղիկոսին տկարութեան պատճառաւատ անոր օդնական եւ փոխանարդ . կարդած էր վանայ Առաջնորդ Գեր . Խղնատիս Եպիսկոպոսը՝ երրյանկարծ յիշեալ կաթողիկոսին սպանման բորբ եւ Աղթամարայ Միարան Խաչատուր Եպիսկոպոսին կաթողիկոս ձեռնարդուիլը խմացաւ . Եւ որովհետեւ այս Եպիսկոպոսը առանց թեմականաց հաւանութեան եւ ազգային վարչութեան դիտութեան ինքինքինքը առանձին կաթողիկոս ձեռնարդել առւեր էր իրեն համախոհ Միարանից ձեռօք . եւ Տ. Պետրոս կաթողիկոսին սպանութեան այլ եւ այլ պարագաները անոր վրայ կամկած՝

ներ կը յարուցանէին : Քաղաքական ժողովը խառն ժողով
կազմելով որոշեց խաչատուր եպիսկոպոսը Երբեւ օրինաւոր
եւ ընդունելի կաթողիկոս չի ճանանալ եւ այսպէս 'ի պաշ-
տօնէ հրամարակել, եւ կատաց Անապատի Արժ . Պօլսու վար-
դապետը Աղթամարայ Աղթոռոյն Տեղապահ կարգելով՝ Բ.
Դրան հրամանագրով ապօրինաւոր կաթողիկոսը Լիմ Անա-
պատը աքսորել տալ . Խոկ վերջէն Աղթամարայ ժողովրդեան
կողմէն խաչատուր եպիսկոպոսին եւ Միարանութեան դէմ
եղած ծանր ամբաստանութեանց վրայ Քաղաքական ժողովը
Յայտադիր ուղղեց առ Բ. Գուռն Աղթամարայ Տ. Պետրոս
կաթողիկոսին սպանաման պարագաները տեղական կառավա-
րութեան միջոցաւ քննել տալու խնդրանոք, 'ի ներկայու-
թեան Լիմ Անապատի վանահայր Թօփուղեան գեր . Յակոբ
եպիսկոպոսի, եւ կարնոյ ու վանայ Գեր . Առաջնորդաց :

Զանազան հարստահարութեանց ենթակայ դտնուած են Հարստահանոթինք
դիմաւորապէս Զարսանճախ, Քղի, Բաղէջ, Տիգրանակերտ,
Վան, Մուշ, Մարաշ, Խարբերդ, Հաճին եւայլն :

Զարսանճախի խնդիրը նախարդ Ժողովին օրէն սկսած է Հարստահանոթինք
յուզուիլ եւ գեռ կը շարունակուի ու վերջնական լուծում մը
առած չէ, թէեւ մինչեւ ցարդ պէտք եղած տնօրէնութիւն-
ները 'ի գործ կը գրաւին : Զարսանճախի Հայոց բողոքները 'ի
սկզբան քասն եւ չորս Տէրեւէներու դործած անիբաւութեանց
եւ արքունի տրոց անիրաւ բաշխման վրայ էին : Այս բողոք-
ները քննելու գործը Բ. Դրան հրամանաւ Ասից Կայսերական
բանակին սպարապես Բ. Տէրպիշ Փաշային յանձնուեցաւ, որ իր
քննութեանց Տեղեկագրով՝ վար ստորագրեր է եւ Զարսանճախի
Առաջնորդը, Զարստահարութեանց ամբաստանութիւնը իրը
անհիմն, խոկ տրոց անիրաւ կերպով պահանջումը իրը ճշմարիտ
իրողութիւն մը կը ներկայացունէր առ Բ. Գուռն, Սակայն
Զարսանճախցիք միշտ գժգոհ, միշտ կը բողոքէին առ աղ-
դային վարչութիւնն եւ եօթը գլխաւոր Տէրեւէներուն հետ
դաս վարելու համար զանոնք Կ. Պօլիս բերել տալ կը պլն-
դէին . Քաղաքական ժողովը նոր ՚ի նորոյ ստացած տեղեկու-
թեանց վրայ անոնց խնդրոյն էական կէտը հասուն քննու-
թեամբ նկատելով վերահասու եղաւ որ խնդիրը հողային

սեփհականութեան խնդիր մ'է : Մէկ կողմէն Զարսանճախի Հայը կը պիդէ թէ իր վարած արտը եւ այդին եւ նստած տունը ու խանութը իրն է , միւս կողմէն Տէրեռէն՝ 'ի վազուց անտի հողատէր գտնուելուն արտօնութեան վրայ խրոխտալով արտ , այդի , տուն եւ խանութ կը դրաւէ եւ կամ հարի տակ կը ձգէ : Քաղաքական ժողովը այս ծանր խրնդը ըստն կարգադրութեան համար վերստին սկսաւ բանակցիթէ իր յայտագիրներովը եւ թէ Ա. Նախագահին միջնորդութեամբը Ալբանքին գործոց Բ. Պաշտօնէին , Բ. Ատեանին Նախագահին եւ Բ. Եպարդոսին հետ , սակայն խնդիրը տակաւին ըլուծուած չէ :

* * * . Գերապատիլ Ստեփաննոս եպիսկոպոսին Ցեղազահութեան ժամանակ Քղիի հարստահարիչ գլաւաւոր Քէտրուէն երկուքը Մայրաքաղաքու դաստանանի բերուած ըլլալով՝ Քաղաքական ժողովը , ինչպէս իր Նախորդը պէտք եղած պաշտպանութիւնը չի խնայեց որպէս զի Քղիի ազգայնոց երկու Քիւրտերու գէմ բացած դատին յաջող վախճան մը տրուի . Սակայն Ցէրութիւնը իր օրինաց համաձայն Քղեցւոց կողմէն եղած ամբաստանութեանց գլաւաւոր կէտերը Երոնկայի Դատաստանական ատեանին մէջ քննել արժան դատելով՝ սյս քննութեան գործը Երզնկայի Կառավարութեան յանձնեց եւ երկու ամբաստանեալ Քիւրտերը առժամանակեայ կերպով Անդրիանուպոլիս աքսորեց :

* * *. Բաղէշ մանաւանդ իր գիրքովը եւ տեղական Ցեղութեան անբաւականութենէն ստէպ քրթաց արշաւանքին ենթակայ ըլլալով՝ ժողովուրդը այլ եւ այլ ոճրագործութեանց եւ աւազակութեանց պատճառաւաւ միշտ ահուգողի մէջ եւ անձնական ապահովութենէն զուրկ էր . Հետեւապէս ստէպ կը բողոքէր առ Վարչութիւնն եւ կը խնդրէր որ տեղական Ցեղութիւնը Ցեղակալութեան վիխուի՝ հանգստութեան եւ ապահովութեան պայմանները ձեռք ձգելու համար , Քաղաքական ժողովը քանիցս անդամ յայտադիր մատոյց եւ յաջողեցաւ պատասխան առնուլ Բ. Պոնէն թէ Բաղէշի եւ Ալեկայ տեղերուն ապահովութեան միջոցները Ցէրութիւնը արդէն տրամադրած է եւ սկիտի գործադրէ :

իսկ Տիգրանակերտ կը տապնապէք Ֆէթթահ Պէկ ամսուն Տիգրանակերտ:
բռնաւորին ձեռոքէն, վահայ ժողովուրդը Թիմուրեան Պէկե-
րուն լրաւծ գաղտնի գարաններէն, եւ ասոնց աքսորմանն զան:
վճռոյն հասնար անդադար կը թափանձէն, Բ. Դուռը Քա-
զաքական ժողովին յայտարարութեանց վրայ յիշեալ Պէկերուն
գէմ եղած ամրաստամութիւնները քննելու հրամաններ ուղ-
ղեց նոյն տեղական կառավարութեանց :

Վրացւոց գաղթականութեան պատճառաւ Ասիոյ այլ եւ
այլ Հայարնակ քաղաքներէն երբեմն անիրաւութեանց տե-
սարան եղած են Երզնկայ, Բինկեան, Զմառա, Եւդոկիա,
Բայլու Եւայլն, Քաղաքական ժողովին յայտադիրներուն վրայ
Բ. Դուռը պէտք եղած քննութիւնը եւ արդարութիւնը՝
գործ գննելու հասնար հրամաններ զրկած է որ որ անկ է:

Հաճին՝ որ զարտուղի եւ կղզիացած գիրք մը կը պահէք Հաճին
ցարդ Տէրութեան կուսակալութեանց նկատմամբ, եւ իր
լեռնային ամրափակ սահմաններուն մէջ գրեթէ ճնշած եւ
խեղդած էր այն տեղ բնակող ժողովրդոց ձայնը, եւ հետեւա-
պէս բնիկ Հայերն ալ կերպով մը օտարացուցած էր ազգային
Հաղորդակցութենէն, ասկէ քանի մը ամսօք առաջ իր մէջ
գործուած անիրաւութեանց եւ բռնութեանց չափը անցած
տեսնելով՝ սկսաւ բուռն գանդատաներ ընել անոնց գէմ։ Քա-
զաքական ժողովը Հայոց կողմէն եկած բողոքները հետզհետէ
Բ. Դրան Հաղորդելէն ետեւ՝ պատասխան առաւ որ Տէրու-
թիւնը պէտք եղած միջոցները՝ ի գործ պիտի գնէ այն անի-
բառութեանց վերջ տալու համար :

Եթէ Քաղաքական ժողովը արքունի այլ եւ այլ հին եւ Արքունի առուք:
նոր տրոց բաշխման եւ հաւաքման նկատմամբ ազգային Պատ-
րիարքարանը հասած գանդատաները եւ խնդիրները մի առ մի
պատմելու փորձ փորձէ պիտի ստիպուի Ասիոյ Հայարնակ քա-
զաքաց գրեթէ մեծագոյն մասին անունները մէջ բերել՝ ի
ձանձրութիւն լնդ հանուր ժողովոյդ։ Ուստի բաւական կը
համարի յայտնել թէ արքունի տրոց զանազանութենէն ծա-
գած շփոթութիւնը, տեղ տեղ բնակչաց վճարելու անիարո-
զութիւնը եւ երբեմն տեղական հաւաքիչ տեսուններու ան-
տեղի պահանջումները, եւ մանաւանդ բաշխման եղանակին

երբեմն հին ազգահամարի տումարներու եւ երբեմն նոր դրութեան վրայ հիմնուած ըլլալը նոյն դանդասանաց եւ խնդիրներուն տեղի տուած են, քաղաքակալան ժողովը այս մասին գաւառաբնակ ազգայիններէն և կած խնդիրները եւ անոնց վերաբերող պարագաները հասուն քննութեան առ ներով Բ. Գրան ընդհանուր եւ մանրամասն յայտագիր մը ներկայացունելու պէտքը կ'զգար, որպէս զի բարեխնամ ջէրութեան չնորհիւը արգարութեամբ պարտ ու պատշաճ տնօրէնութիւնն ըլլայ, սակայն այս կարեւոր գործը ժամանակի կարօտ ըլլալով իր պաշտօնին կարճատեւ միջոցին մէջ շատացած է միայն արքունի տրոց բաշխման եւ հաւաքման վրայ և կած դանդասները Բ. Գրան հետզէտէ հազորդել իր յայտագիրներով եւ պէտք եղած անօրէնութիւնը հայցել:

— 11 11 11 11 11 —

Թ. Ա. Ղ. Ա. Կ. Ա. Ն.


Յարաբերութիւն:

Ազգային վարչութեան թաղական խորհրդոց հետ ունեցած յարաբերութիւնները՝ թէեւ կարեւոր՝ սահմաննեալ են: Թաղական խորհրդութիւնները ընտրութեան սկզբունքով անկախ կացութիւն մը կը բռնեն իրենց ներքին գործոց մատակարարութեան շրջանին մէջ սակայն կերպոնական վարչութեան հսկողութեան ներքեւ դանուելով՝ անոր այլ եւ այլ ճիշգերուն հետյարաբերութիւններ ունին: Այս յարաբերութիւնները դժբաղդաբար կանոնաւոր կերպով կատարուած չեն մինչեւ ցայսօր, կէս մը թաղական խորհրդոց մեծագոյն մասին դանդաղութենէն եւ կէս մը ջեսուչ խորհրդոց երերուն վիճակին պատճառաւ: Այսիմանադրութեան չհայտն յօդուածին արամագրութեանց գործադրութիւնը մանաւանդ անտեսական դաշիւը մասնաւոր տեղի ունեցած է: Խոկ շատ թաղերունկեցեց հաշիւը, ելեւմակից ցուցակը եւ կալուածագրերը չեն ներկայացած ցնտեսական խորհրդին որ ստէպ ազգարա-

ըստ թիւն գրած է , եւ վերջապէս Քաղաքական ժողովին աշ-
սոր համար բաղոքած է , Քաղաքական ժողովը իր իրաւասու-
թեան ներքեւ դանուած միջոցներով՝ վարչութեան հիւղե-
րուն խնդիրները թաղական խորհրդոց ՚ի պահանջել հարկին
հաղորդած է միշտ , բայց կը ցաւի յայտնել որ միշտ ամենուն
կողմէն նոյն խնդիրները կատարելու համար մի եւ նոյն գոր-
ծակցութիւնը եւ պատրաստականութիւնը տեսած չէ :

Աւստի Քաղաքական ժողովը թաղական խորհրդոց ընթացքը կանոնագրութիւն
եւ պարտաւորութիւնը սահմաններու եւ վարչութեան առջեւ-
անոնց ունեցած յարաբերութիւնները որոշելու համար միօ-
րինակ կանոնադրութիւն մը Յանձնաժողովի մը ձեռո.օք պատ-
րաստելու եւ Խառն ժողովով քննելու հարկը տեսաւ ըստ
Սահմանադրութեան , սակայն յիշեալ Յանձնաժողովը գեռ-
իր ծրագիրը չի ներկրացացուց :

Խակ այլ եւ այլ թաղական խորհրդոց անժամանակ հրա- Ըստութիւնք:
ժարելով՝ թաղական գործոց մասակարարութիւնը երեսի
վրայ չի մնալու համար՝ Քաղաքական ժողովը հրաժարմանց
պատճառները քննելով՝ ըստ այնմ կամ համզած , կամ առ-
ժամանակեայ տեսուներ կարգած եւ կամ անմիջապէս նորոդ
թաղական խորհրդոց ընտրութեան համար հրահանգներ
դրկած եւ զանոնք վերատին հաստատած է . Խնչպէս Սամա-
թիոյ թաղական խորհրդը , որ հաշուի խնդրոյ առթիւ
հրաժարած , եւ տեղը առժամանակեայ Յանձնաժողով սահ-
մանուած էր , Տնտեսական խորհրդոցն միջոցաւ այն հաշուի
խնդիրը քննուելէն ետեւ՝ վերակազմուեցաւ : Գումարափուի
Մայր Եկեղեցւոյ թաղական խորհրդը որ մեծաւ մասամբ
հրաժարած էր , Նորոգուեցաւ : Եւնի Գամփուի , Գուգլուն-
ճուխի , Պօյաճը գիւղի թաղական խորհրդները որ լամբովին
հրաժեշտ տուեր էին , նորոգ ընտրուեցան :



Քաղաքական ժողովը՝ այս իննամանեայ ընթացքին համա-
ռաօտ Տեղեկադիրը Պատկառելի ժողովոյդ ներկայացունելով՝
հրաժարելու ատեն , վերջին պարտք մը եւս ունի կատարել ,

այն է , իր փորձառութենէն քաղաք քանի մը դիստղութիւն ները ընել ազգային Սահմանադրութեան ընդհանուր դորժադրութեան վրայօք :

Հարեւանցի նկատմամբ ազգային Սահմանադրութիւնը մինչեւ ցայսօր նշանաւոր արդիւնք մը տուած չերեւիր , սա կայն իրօք Ազգը Սահմանադրութեամբ եւ Սահմանադրութիւնը Ազգով երկու կարեւոր իրազութիւն փոքր ՚ի շատ ստացան . այսինքն՝ պարառոց եւ իրաւանց ճանաչումը , եւ ասի ալ մեծ յառաջդիմութիւն է :

Եթէ մէկ կողմէն այս ճանաչումը զարդացունելու գործը ազգային դաստիարակութեան կը վերաբերի , միւս կողմէն կեդրոնական վարչութեան գործն է ազգային դաստիարակութեան դրութիւնը ընդարձակութել եւ միանդամայն ինքզինքը կատարելագործել այն ամեն դործնական միջոցներով որով կարելի է միայն համօրէն Ազգը Սահմանադրութեան օրինաց իշխանութեան տակ ամփոփել եւ իրաւանց ու պարտոց ճանաչումը , համոզման եւ գործողութեան դարձունել : Մեր ազգային վարչութիւնը մինակ տեսապէս գործելով չի կրնար իր տնօրինութիւնները իրացունել : Խորհրդականութիւնը եւ ժողովականութիւնը խորհուրդ եւ որոշում կու տան միայն ըստ Սահմանադրութեան , ինչպէս որ անձնուիրաբար տուած են . Բայց մինչեւ ցայսօր տիրած դրամական նեղութիւնը , գործադիր պաշտօնէից ու այլ եւ այլ գործիքներու նուազութիւնը , ներքին եւ արտաքին կանոնադրութեանց անպատճառատականութիւնը զԱզգային կեդրոնական վարչութիւնը շատ անդամ տկարութեան եւ անդործութեան մէջ , վարչական յարաբերութիւնները եւ պաշտամանց ընթացքը շփոխութեան մէջ եւ ազգային Սահմանադրութիւնը շատ կէտերու նկատմամբ անդործադրութեան մէջ ձգած են :

Այս խոչնդունները Սահմանադրութեան էակից եւ յարակից չեն բնաւ , այլ անոր տրամադրութեանց թերի գործադրութեան հետեւութիւններն են :

Ի վերջէ Պատկառելի ընդհանուր ժողովոյդ Ազգ . բարձր իշխանութեան կը վերաբերի այն գ.ժուարութիւնները բառանալու միջոցներուն վրայ խորհիլ եւ տալ յաջորդ վարչու-

թիւններուն շարժմանց այն ազատութիւնը որով կարող ըլլան
աւելի նպաստուոր պարագաներով ներկայանալ Պատկառելի
ժողովոց եւ համար 'ի ձեռին իրաւամբ ըսել : « Ահա մեր
գործը , ահա մեր ըրած ծառայութիւնը առ ինդհանուր
Ազգն » :

50 Ապրիլ 1865

Ի Պատկարքարանի Հայոց

Կ. Պոլիս:

Ի Գիւղան ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ, 08

ԱՏԵՆԱԴՊԻՐ


ԱՏԵՆԱՊԵՏ

Գ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԲԱՐՈՒՆԱԿ ՖԵՐՈՒՀ

ԿԵՐՈՒՆԱԿԱՆ ԴԻԻԱՆԱԳԵՑ

Մ. ՄԱՄՈՒՏԵԱՆ



ՅԱՅՏԱԳԻՐ



ՎԻՃԱԿ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՈՅ*

1864 Յուլիս 24ին Քաղաքական ժողովը իր առաջին նիստը կազմելէն անմիջապէս ետքը ազգային ընդհանուր տուրքը տնօրինելու ձեռնարկեց Յունիսի 26ին Ընդհանուր ժողովոյդրած որոշման համեմատ։ Ուստի Գիւանէն կրկին եւ կրկին խնդրեց՝ որ տրոց մասին եղած որոշմունքը իրեն հաղորդէ։ Գիւանը իրը պատասխան՝ Յունիս 26ին եղած նիստին Ատենադրութիւնը, ինչպէս որ է, զրկելով Օդոսոսի 10ին, առաջարկած էր որ պէտք եղածը Քաղաքական ժողովը անոր մէջէն քաղէ։ Քաղաքական ժողովը ազգային տրոց մասին հետեւեալ որոշմունքը դատ Ատենադրութեան մէջ։

Ա. 1864 ապրուան համար 400000 զշ՝ տուրք հաւաքել։

Բ. Տրոց Յանձնաժողովին եւ Քաղաքական ժողովին մատուցած տեղեկագիրներուն ցոյց տուած բաշխման եւ հաւաքման եղանակին հետեւել։

Հետեւապէս Քաղաքական ժողովը իր գ. նիստին մէջ ուրոշեց Մասնաժողով մը կազմել տրոց ըստ աստիճանի դասաւորութեան եւ ցոյցակներուն պատրաստութեան համար։ Այս պաշտօնը յանձնեց Մեծ Աղաթոնեան Գրիգոր եւ Մուղայեածեան Յակոբ Լիքէնտիներուն, որպէս զի Տնօնեական խորհրդայն հետ խորհրդակցելով պէտք եղած հրահանդը պատրաստեն։

* Թէպէտ այս եւ Գաւառական երեսինսանութեան ինդինսեր ասկէ քանի մը ամսօք առաջ ընդհանուր ժողովին ներկայացած են սոյն զատ զատ յայտագիրներով եւ մինակ առաջնոյն վրայ Մարտի 49ին Ընդհանուր ժողովին մէջ որոշում եղած է, եւ միւսը գեռ խնդրոց կարգն է, սակայն արժան դատուեցաւ երկուքն ալ ներկայ Տեղեկագրիս կցորդել ՚ի տեղեկութիւն։

Տնտեսական խորհուրդը յիշեալ Մասնաժողովին աջակցութեամբը պատրաստած տեղեկագիրը մատոյց Քաղաքական ժողովին։ Այս տեղեկագրին գլխաւոր կէտերն էին։

Ա. Խւրաքանչիւր թաղի բնակչաց անուններուն ճիշդ ցուցակը շինել Թաղական խորհրդոց միջնորդութեամբը։

Բ. Սոյն ցուցակին մէջ աղդային ընդհանուր տուրք վճարելու կարողութիւն ունեցող անձանց անունները նշանակել ըստ 90⁺ յօդուածոյ Սահմանադրութեան։

Գ. Այս գործողութենէն ետքը թաղեցիքը իրենց կարողութեան աստիճանին համեմատ 10 կարգի գասաւորել, եւ այս գասաւորութիւնը արդարութեամբ կատարելու համար ամեն անհատի հրաւեր կարդալ որ իր կարողութեան չափը որոշէ ստորագրութեամբը հինգ օրուան մէջ։ Իսկ եթէ այս պայմանաժամէն ետքը պատասխան չստանայ, թաղական խորհրդը ինքնին որոշէ կարողութեան աստիճանը, եւ որոշողներուն անուղղութիւնները յետ քննութեան որքագրէ։

Դ. Թաղական խորհրդը աստիճանները այսպէս որոշելէ ետեւ ցուցակը վաւերացեալ աղդային վարչութեան ուղղէ, որպէս զի նա եւս քննէ զայն, սրբագրէ եթէ որբագրութեան կարօտէ, եւ յետոյ հաւաքման զբաղի։

1864 Եեպաեմբեր 10ին՝ Քաղաքական ժողովը այս խմաստով շրջաբերական գիրեր՝ նոյնպէս գիրութեան եւ միակերպութեան համար թաղեցւոց ուղղուելիք տպեալ նամակներ զրկեց բոլոր թաղական խորհրդոց որ այս ամենակարեւոր գործողութեան ժամանակ ակնին։

Միեւնոյն միջոցին Քաղաքական ժողովը նաեւ տրոց հաւաքման համար պէտք եղած պատրաստութիւններուն ձեռնարկելով՝ Ելեւմնից հոգաբարձութեան միջոցաւ, որոշեց 5-6 հաւաքիչ կարգել առանց ամսականի եւ սա պայմանաւոր խւրաքանչիւրը տասն հազար զուրուշի հաստատ երաշխաւորութիւն ցուցնէ եւ հաւաքելիք ստակէն հարիւրին տասնին իրաւոնք ունենայ։

Սակայն որոշեալ պայմանաժամը կը լրանար եւ տակաւին ժաղերէն տրոց ցուցակները չէին համներ, հետեւապէս Հոկ-

տեմբեր 20ին երկրորդ շրջաբերական մը ուղղուեցաւ թաղականն իսորհրդոց որ յիշեալ ցուցակները ժամանակաշը զրկեն, եւ միանգամայն թաղական խորհրդոց Աստենապետներն ու Առեւնադպրութերն ալ հրաւիրուեցան այս մասին յատուկ պատուէրներ տալու համար :

Վերջապէս՝ Նոյեմբեր 13ին՝ մինակ Դալաթիոյ եւ Գուրուչշմէի թաղերէն եկած ցուցակները թաղաքական ժողովին ներկայացան, որ անմիջապէս Մասնաժողովը մը կազմելով զանոնք անոր քննութեան յանձնեց, եւ միւս թաղական խորհրդոց իր պատուէրը երրորդեց ցուցակներուն պատրաստութեան համար : Եւ հետզհետէ զրկուած ցուցակները որոց թիւը հազիւ թէ 8ի կը հանի, քննելով եւ հարկ եղած սրբադրութիւնն ընելով գեկուեմբեր 25ին (Ելեւմտից հոգաբարձութեան յանձնեց որ հաւաքման սկսին :

Ազգային ընդհանուր տրոց հաւաքումը այսպէս յապաղելուն՝ Ազգին ելեւմտական արդէն նեղ վիճակը աւելի եւս կը ծանրանար եւ վարչութեան ընթացքը կը վրդովէր :

Մնառուկին հասոյթը բաւական չէր վարչութեան անհրաժեշտ ծախուց, որոց դիմաւոր դուներն եին Ազգային Հիւանդանոցը, եւ Ազգային Պատրիարքարանը : Հիւանդանոցի հոգաբարձութիւնը անդադար իր հրաժարականը կը մատուցանէր եւ որտշեալ նպաստը Մնառուկէն իրաւամբ կը խընդրէր, Պատրիարքարանի պաշտօնեայք իրենց ամսական վարձուց համար միշտ բոլոք կը բառնային : Խակ հին պարտուց համար որոց վրայ նոր պարտքեր ալ կ'աւելնամ, եւ պատահական ծախուց համար կեղծընական Մնառուկը հազիւ հազդոյացած հասոյթէն, որ դիմաւորապէս անձագրատան եւ նշանառուութեան անդիւնքն են, փոքր գումար մը կը ինայէր բայց Առաջնորդական վիճակներէն սահմանուած տարեկան տրոց վճարումը կ'երկարէր, եւ մասնաւորապէս Ս. Երուսաղէմի քանի մը տարուան ունեցած պարտքը դքեթէ անվճար կը մնար, թէ եւ այս տուրքը Ելից եւ Մտից հաշուելուին մէջ նշանաւոր գումար մը կը ներկայացնէ :

Այս դժուարութեանց առջեւ թաղաքական ժողովը հաւաքուելիք ընդհանուր տրոց միջոցաւ հատուցանելու պայ-

մանաւ Թաղական խորհուրդներէն փոխառութիւն մ'ընել ու
բոշեց , որպէս զի Պատրիարքարանի պաշտօնէից ամսական
ները գէթ մասամբ իւիք վճարէ , սակայն այս որոշման գործ
ծագութիւնն այլ ապարդիւն մնաց . Այս գլուխական նեղու-
թիւնը օրի օրի սաստկանալով վարչութեան ճիւղերուն մէջ
վհասութիւն ձգեց . Տնտեսական խորհրդոյ եւ Ելեւմտից
հողաբարձութեան մէջ իրաւասութեան խնդիրներ ծագեց
յան , որոց կարգադրութեան համար թէ եւ Քաղաքական
ժողովը ամեն ջանք՝ ՚ի գործ դրաւ , սակայն այս պատճառառաւ
անոնց նիստերը խանգարեցան . Հրաժարականները սկսան
իրարու յոջորդել . Տնտեսական խորհուրդը եւ մանաւանդ
Ելեւմտից եւ Հիւանդանոցի Հողաբարձութիւնները երևա-
կան դժուարութեանց համար իրենց պաշտօնէն քանի մը ան-
դամ հրաժեշտ տուին , եւ Քաղաքական ժողովը հաղիւ կա-
րող եղաւ զանոնք համոզելու . Բայց մինչդեռ Քաղաքական
ժողովը իւր ճիւղերուն հաստատութեան համար փորձ կը
փորձէր , ինքն ալ քաջալերութեան կարօտ էր զանազան աղ-
գային գործ եր անօրիններու , ազգային պաշտօննեացները համ-
բերութեան յորդորելու , եւ մանաւանդ արաց հաւաքումը
յաջողութեամբ ՚ի կատար հանելու համար :

Քաղաքական ժողովը ցաւօք սրտի կրյացանէ որ անյա-
ջող դտաւ իր այս վերջին առաջադրութեան մէջ : ՚Եոր տա-
րին կսկսէր , իր պաշտօնատարութեան պայմանաժամին լր-
րումը մօտալուտ էր , եւ տակաւին ազգային տուրքէն ստակ
մը կերպոնական Մնացուկը մտած չէր , թէ եւ վստահութեամբ
կրնայ հաստատել որ այս մասին պէտք եղած անօրէնութիւն-
ները լիսլին կատարած էր :

Քաղաքական ժողովը փորձառութեամբ դիտեց որ այս
անյաջողութեան պատճառներն են :

Ա. Տրոց բաշխման եղանակին վերաբերող հանդամանքներ :
Բ. Քաղաքական խորհրդոց միջոցաւ աստիճանաց դասաւո-
րութիւնը որոշելու սկզբունքը :

Գ. Քաղաքական խորհրդոց արդի վիճակը :

Ա. Կէտին նկատմամբ Քաղաքական ժողովը իրաւունք չու-
նէր փոփոխութիւն մը ընելու . ըստ որում ինդհանուր ժողովով

Հաստատուած բաշխման եղանակը ինդհանուր ժողովին կը վերաբերէր ուղղել:

Բ. Թաղական խորհուրդներուն մեծ մասը զլացան այս պարագայիս մէջ իրենց սովորական ձեռնատութիւնը մատուցանել Քաղաքական ժողովին տրոց դասաւորաթեան համար, ըստ որում իւրաքանչիւր թաղ աւելի իր թաղին շահը սրահանելու եւ Թաղական առուրքը ապահովելու տրամադիր կը դանուէր, քանի թէ վարչութեան շահը եւ Ազգային ինդհանուր տուրքը:

Գ. Թաղական խորհուրդներէն ոմանք զանազան տեղական պատճառաւ անկազմ, ինչպէս Սամաթիոյ, Քարակէօմրիւկի, Պալատի, Հիսարի, Պոյաճը գիւղի եւայլն, ոմանք անկարող ինչպէս Թօփ գափուի, Էջիպի, Գում գափուի գրափ, եւ այլն, եւ ոմանք օրինաւոր նիստ կազմելու եւ ըստ օրինի դործելու անձեռնհաս դանուելով բնականապէս իրենց տրոց յուցակները չկըցան պատրաստել:

Քաղաքական ժողովը թէ այս պատճառները եւ թէ ութը թաղէ եկած արոց ցուցակները քննելով՝ հաստատութեամբ դուշակեց որ որոշուած 400,000 զուրուշի Ազգային առուրքէն հազիւ թէ 150,000 զուրուշ կարելի պիտի ըլլաց հաւաքել, եւ հետեւապէս մտադիր էր իրաց այս վիճակը ինդհանուր ժողովով. ներկայացնել առկէ առաջ եւ խորհուրդ հարցնել, բայց ըստ որում այս դործողութիւնը երկար ժամանակի կարոտ եւ վարչութեան ալ գիմնասլ անհնար էր, որոշեց դուք ինդհանուր ժողովոյ Դիւանին, Տնտեսական խորհրդոյ եւ Ելեւմուից ու Հիւանդանոցի Հոգաբարձութեանց հետ համախորհուրդ ժողով կազմել եւ դարման մը մտածել: Ուստի ներկայ տարւոյս Յաւնվար 15 ին Քաղաքական ժողովը արոց վիճակը բացատրեց համախորհուրդ ժողովին եւ դիւանը առած տեղեկութիւններէն հետեւեալ կարծիքը յայտնեց:

Նախ՝ թէ Ազգային տրոց դործողութեան մէջ Քաղաքական ժողովը կարելի եղածին չափ իր պարտքը կատարած է՝ բայց չէ յաջողած այլ եւ ոյլ արդելքներ պատահելուն, որոնք արոց բաշխման եղանակին եւ ընդհանուր ու թաղական տրոց շփոթութեան կը վերաբերին:

Երկրորդ՝ թէ պէտք է ներկայ տարւոյս Ելեւմսից հաշուէ կշիռը պատրաստելու եւ արոց բաշխման եւ հաւաքման եղանակը օրինաւոր գրութեան վրայ հաստատելու պաշտօն ունեցող մասնաժողով մը կազմել, ինչպէս որ արդէն ինդհանաւը ժողովդ ալ տրամադրած էր :

Երրորդ՝ թէ Քաղաքական ժողովը աղդացին արոց հաւաքումը ըստ կարի վութացնէ հաւաքուելիք ստակով վարչութեան անմիջական պիտոյքը հոգալու համար, եւ արոց արդի վիճակը առաջին առթիւ ինդհանուր ժողովոյ Ատենին ներկայացնէ :

Քաղաքական ժողովը ինդհանուր ժողովոյ Դիւանին այս կարծիքը ընդունեց, եւ անմիջապէս անոր ակնարկած Մասնաժողովը ընտրեց, որոյ Անդամ են :

Վաեմ. Ապրօ Լիֆէնտի .

" Գ. Աղամօն Լիֆէնտի .

" Ռուսինեան Լիֆէնտի .

Բայց որպէսէտեւ Ազգային հիւանդանոցը ծանր նեղութեան ներքեւ կը տառապէր, եւ անմիջական գարմանի կարու էր, համախորհուրդ ժողովը որոշեց Յական զուրուշոց 20 հազար տոմսակ տպել Հիւանդանոցի չողարարձութեան միջոցաւ, եւ աղդացիններէն առժամանակեայ կերպով եւ մի անդամի համար կամաւոր նուէր հաւաքել, յուսալով որ աղդային արոց հաւաքմամբը կեդրոնական լիստուկը աւելի յաջող վիճակի մը մէջ պիտի մտնէ :

Ահա այս կացութեան մէջ կը դանուին Ազգային տուրքը եւ կեդրոնական լիստուկը, ներկայ յայտագրէն պատկառելի ինդհանուր ժողովդ նկատեց անշուշտ, որ Քաղաքական ժողովը որոշուած 400,000 զուրուշի տուրքքը, որ վարչական տնօրէնութեանց կատարեալ յաջողութեան էական տարբն ու պայմանն էր, հաւաքելու համար իր. Ա. նիստէն սկսաւ պէտք եղած միջոցները ՚ի գործ դնել, բոլոր թաղական խորհուրդն ներէն սպասուած գործակցութիւնը չդժաւ, իր առջեւը գըրամական նոր նոր գժուարութիւններ տեսաւ, որոնք մինչեւ իր գոյութեանը եւ իր ճիւղերը քակելու սպասնացան, փոխառութեան դիմեց չյաջողեցաւ, թաղական խորհրդոց հետ

զհետէ հինգ անգամ հրաւէր կարդաց տրոց ցուցակները
ինդրելու , եւ հազիւ թէ ութը թաղէ ստացաւ . տրոց հաւա-
քումը անմիջապէս սկսել տուաւ , եւ միանդամայն նշմարեց
որ այս ընթացքով 150,000 զտրուշ պիտի հաւաքուի :

Վերջապէս ստիպուեցաւ համախորհուրդ ժողով կադմել
եւ արտաքոյ կարդի միջոցի մը դիմել Հիւանդանոցի պատրու-
պարեալները խնամելու համար :

19 Փետրուար 1865
Ի Պատրիարքարանի Հայոց
Ի. Պոլիս



ՅԱՅՏԱԳԻՐ

ՎԻՃԱԿ

ԳԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ

Կախորդ Քաղաքական ժողովը 1863 Հոկտեմբեր 18ին
ըրած Բ. նիստին մէջ Ասհմանագրութեան առջի Գործադիր
Յանձնաժողովին հրաժարականը ընդունելու ստիպուելով,
Պատկառելի բնդհանուր ժողովոյդ նոյն տարուան Սեպտեմ
բեր 20ին ըրած որոշման համեմատ եօթը հոդիէ բաղկացեալ
նոր Գործադիր Յանձնաժողովը մը կազմեց, որուն գլխաւոր
պաշտօննէ գաւառաց մէջ Ասհմանագրութիւնը հաստատել
եւ գաւառական երեսփոխանները օր առաջ ընտրել տալ:
Նորընտիր Գործադիր Յանձնաժողովը գաւառական Ա. Տնօր
քէնութիւն մը պատրաստեց, որ հետեւեալ կարեւոր կէտե-
րուն վրայ հրահանդներ կը պարունակէր:

Ա. Թաղական խորհրդաց կազմութեան վրայ.

Բ. Ասհմանագրութեան Գործադիր Օգնական ժողովի վրայ.

Գ. Թաղական խորհրդաց ընտրութեան վրայ:

Դաեւ ազագայ տնօրքնութեանց վերաբերող քանի մը
տեղական եւ աշխարհագրական հարցումներ :

Այս Ա. Տնօրքնութիւնը Քաղաքական ժողովոյ հաւանու-
թեամբը, նոյնպէս գիւրութեան համար պատրաստուած
հարցմանց տեղեկագիրը տպեալ 1863 դեկտեմբեր 2ին 60ի
չափ Առաջնորդական վիճակաց զրկուեցան, որոց ցուցակը
Ա. Տնօրքնութեան եւ տեղեկագրին օրինակներուն հետ Յայ-
սագրիս կցորդ կը գտնուին :

Աահմանադրութեան գործադիր Յանձնաժողովը գործեւ
լու համար ՚ի հարկէ այս Ա. Տնօրինութեան գործադրու-
թեան պիտի սպասէր, եւ ասոր համար Քաղաքական ժողովը
քանի մը անգամ Առաջնորդաց իր ազգարարութիւնը կրկնե-
լէն ետեւ, 1864 Ապրիլի սկիզբէն սկսաւ հետզետէ ստա-
նալ գաւառներէն եկած Թաղական խորհրդոց ընտրութեան
յայտադիրերը ու այլ եւ այլ պատասխաններ :

Ա. Տնօրինութիւնը ստացող ՅՈՒ չափ վիճակները պատաս-
խան դրած են Վարչութեան, սակայն ասոնցմէ միայն 23 վի-
ճակ բաւական օրինաւոր յայտադիրեր գրկած են. միւսները
կամ Առաջնորդի պակասութենէ կամ իրենց սահմանադրա-
կան գործողութեանց ունեցած անվարժութենէն եւ կամ
հին դրութեան միտող անձանց հակառակութենէն Ա. Տնօրի-
նութիւնը չեն գործադրած, եւ հետեւապէս Վարչութենէն
կրկին հրահանդ, բացատրութիւն կամ քննիչ խնդրած են:
Քաղաքական ժողովը ասոնց խնդիրը կըցածին չափ կատա-
րած է մօտակայ վիճակներէն Առաջնորդներ իրը Խաղաղա-
րար քննիչ զրկելով եւ պէտք եղած բացատրութիւնները
հաղորդելով. դարձեալ յիշեալ քանն եւ հինդ վիճակներէն
տասն հինդ վիճակ իրենց թեմերով հանդերձ Թաղական
խորհուրդները կազմած են եւ կը գործեն. իսկ մնացած վի-
ճակներուն, ինչպէս են Ամսախայի, Երզնկայի, Մուշի, Եղե-
սիոյ, Անդէպի եւ այլն թեմերուն մէջ Թաղական խորհրդոց
հաստատութիւնը անստոյդ վիճակի մէջէ :

Ահաւասիկ Առաջնորդական վիճակներէն եկած Տեղե-
կադրոց գլխաւոր բոլանդակութիւնը,

	Առաջնահարշական վիճակը	Կորուսազգ թաղականացք	Վիճակին արարակացք	Համեմատական վիճակը	Ենթականական վիճակը
4	Էտիբնէ	27	2598	894	20
2	Թէքիբատաղ	8	5479	4664	...
5	Վառնա	8	4882	746	...
4	Պրուսա	5	4904	4862	50
5	Պանտրմա	6	5522	4625	50
6	Քէօթաշեա	2
7	Իզմիր	46	5656	4745	54
8	Ամսաբիս	5	2440	782	45
9	Եւդոկիա	49	6547	5045	55
10	Ա. Դանիելի գանձք	5
11	Խարբերդ	9
12	Բալու	45	5949	4207	42
15	Կարին	50	9922	5968	50
14	Պարս	54	2048	4244	50
15	Բաբերդ	47	2518
16	Երգնկա	4
17	Մուշ	5
18	Եգեաբա	5
19	Շապին Պարահիսար	24	6065	2955	25
20	Հանդէպ	4	5520	4850	...
24	Մարաշ	4	2798	4467	50
22	Անտիոք	45	2579	4574	...
25	Պէլչն	6	4982	4024	...
24	Ջէլէղէղէլ	2
25	Եղիպատոս	2	302	508	48
		292			

Սահմանագրութեան Գործադիր Յանձնաժողովը այս յայտագիրներէն անմիջապէս Ետքը Գաւառաւական ժողովոց կազմութեան համար Բ. Ցնօրինութիւն մը պատրաստելու ձեռնարկեց։ Այսկայն նկատելով որ Առաջնորդական արդի բաժնանումը խառնու ու շփոթէ, առաջարկեց Առաջնորդութիւնները ըստ կուսականութեանց սահմանել եւ անոնց թիւը 22ի վերածել։ Հետեւապէս այս դրութեան համեմատ Առաջնորդական վիճակաց հանրացոյց պատկեր մը շինեց եւ իւրաքեզեկագրով Հոկտեմբեր 29ին Քաղաքական ժողովոյն ու շագրութեան ներկայացուց։ Քաղաքական ժողովը այս նոր դրութեան սկզբունքը բնուունեց այն պայմաննաւ որ գործադիր

ըելի ըլլայ միտյն այն Առաջնորդաց սահմաններուն համար, որոց բաժանումը դիւրին է, Ասհմանադրութեան Գործադիք յանձնաժողովն ալ այս գիտօղութիւնը ընդունեց եւ պէտք եղած որբագրութիւնը ըրաւ, բայց որովհետեւ կրօնական ժողովը անոր գործադրութեան նկատմամբ ապագային մէջ ծագելիք գժուարութեանց վրայ դիտողութիւններ ըրաւ, խառն ժողովով որոշուեցաւ ընդհանագահութեամբ կրօնական ժողովոյ Առենապետ Ներսէս Եպիսկոպոսի խառն յանձնաժողով մը կազմել, աշխարհագէտ եւ գաւառական գործոց հմտուանձերէ եւ նոյն հանրացցց պատկերը անոր քննութեան յանձնել, Այս խառն յանձնաժողովը իր տեղեկագիրը մատոց դեկտեմբեր 25 ին, որով կառաջարկեր .

1° Առաջնորդական վիճակները առ այժմ իրենց դրից մէջ պահել, սա պայմանաւոր Առաջնորդները բաղմանաց քաղաքաց մէջ նստին :

2° Ամեն Առաջնորդական վիճակի մէջ առանձին վարչութիւնն հաստատել ըստ Ասհմանադրութեան :

3° Մանր Առաջնորդութիւնները իրենց մօտ գտնուած Առաջնորդութեանց մէկուն հետ գոնէ քաղաքականօրէն միացնել, որպէս զի անոնց միջոցաւ իրենց քաղաքական գործերը տնօրինուին :

Քաղաքական ժողովը խառն յանձնաժողովին մէջ բերած պատճառները քննութիւնը կրօնական ժողովոյ խորհրդակցութեամբ նկատեց որ արդարեւ նոր ծրագրին անթերի գործադրութեամբը Առաջնորդական հիմնական փոփոխութիւններ պիտի ըլլային, նա մանաւանդ նոր ծրագրին անթերի գործադրութիւնը ոչ միայն երկար ժամանակի եւ յասուկ տեսութիւններու կարօւ էր, այլ եւ անոր հիմք վտվոխութեան ենթակայ էր քանի որ Տէրութեան գաւառական կառավարութիւններն ալ հետղիւթեան վտվոխութեան ենթակայ ըլլարիքը 'ի պաշտօնէ ծանուցուած էր :

Հետեւապէս խառն ժամանակը որոշեց նոր ծրագրին գործադրութիւնը առ այժմ ետ ձգել, արդի վիճակային դրութիւնը քանի մը վտվոխութեամբ պահել եւ գաւառական փարչութեանց կազմութեան ձեռնարկել, եւ ասոր համար

Ապահմանադրութեան գործադիր յանձնաժողովին պատրաստած Բ. Ճնօրէնութիւնը գլխաւոր վիճակները զրկել։

Այս Բ. Ճնօրէնութիւնը, որ Յայտադրիս կցորդ է հինդմաս կը պարունակէ։

Ա. Նախապատրաստութիւն։

Բ. Գաւառուական ժողովը, կազմութիւն եւ եղանակ բաշխման։

Գ. Ընտրութիւն Եկեղեցական Երեսփոխանաց։

Դ. Ընտրութիւն Առաջնորդանիստ քաղաքի Երեսփոխանաց։

Ե. Ընտրութիւն թեմական Երեսփոխանաց։

Սրբազն Պատրիարքը այս որոշման համեմատ Բ. Ճնօրէնութիւնը յատուկ նամակաւ զրկեց ներկայ տարւոյ Յունուարի սկիզբները տասնեւութը Առաջնորդաց, որոց ցուցակն է այս։

Ա. Յահական կազմակերպութիւն	Երեսփոխանաց	Բարի բարեկանութեան մաս թագավորական արքունիքութեանց	Երեսփոխանաց մաս թագավորական արքունիքութեանց			
4 Ետիքնէ	28	92 բն 4	4	46	8	
2 Թէքիրտաղ	42	125 ա 4	6	24	42	
5 Վառնա	28	67 ա 4	4	46	8	
4 Պրուսա	42	146 ա 4	6	24	42	
5 Պահտրմա	55	405 ա 4	5	20	40	
6 Խզմիր	42	145 ա 4	6	24	42	
7 Ամասիա	28	86 ա 4	4	46	8	
8 Եւղոնիա	42	450 ա 4	6	24	42	
9 Բալու	42	444 ա 4	6	24	42	
10 Կարին	49	202 ա 4	7	28	44	
11 Ղարս	28	65 ա 4	4	46	8	
12 Բարերդ	28	90 ա 4	4	46	8	
13 Շապին Ղարս	55	474 ա 4	5	20	40	
14 Մարաշ	55	79 ա 4	5	20	40	
15 Հանդէպ	55	400 ա 4	5	20	40	
16 Եղիպտոս	28	25 ա 4	4	46	8	
17 Անտիոք	28	85 ա 4	4	46	8	
18 Պէլէն	28	60 ա 4	4	46	8	

Ահա այս է Սահմանադրութեան գործադրութեան վիճակը դաւական ժամանակակից հետղնետէ պէտք եղած տեղեկութիւններն առնելու ետեւ՝ պիտի փութայ միւս վիճակաց ալ Բ. Տնօրինութիւնը դրկել եւ այն ժամանակ վորքը Առաջնորդութեանց մասին որոշուած տրամադրութիւնը գործադրել:

Դեռ Բ. Տնօրինութեան գործադրութեան մասին լուր մը եւ կած չէ. եւ կը մնայ գաւառական վարչութեանց ամբողջ կազմութիւնը, որպէս զի ըստ այնո՞ւ Տնօրինութիւն մը պատրաստուի գաւառական երեսվոխանաց բաշխման եւ ընտրութեան համար, որով պատկառելի ինդհանուր ժողովը յուսալի է որ քանի մը ամիսէն իր կատարեալ ամբողջութիւնը գտնէ.

49 Փետրուար 4865

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի. Պոլիտ.

Ի Գիւղի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ


Գ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԲԱՐՈՒԽԱՆ ՖԵՐՈՒ


ԿԵԴՐՈՒՆԱԿԱՆ ԴԻՀԱՆԱՊԵՏ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ









16359

7013



